

40707-63

361

E-93

Ленг-Ленарфс-Бирг
Киевнг с. 24. 1966г.

<u>VII</u>	<u>179</u>	<u>4/1111</u>	<u>58</u>

ПК а. 392. т. 3.000.000

6 MAR 2010

804

ՆՈՐ - ՆԱԽԻՋԵԽԱՆԻ

ՀԱՅՈՑ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

1860—1910

Կ/Կ92

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԽԱՆ
Տպարան Ա. Յ. Աւագիսինի
1911

Нахичевань на Дону
Типографія С. Я. Авакова.
1911

14-1292

3-61
7-93

das JIL S

ՆՈՐ - ՆԱԽԻԶԵԿԱՆԻ

ՀԱՅՈՑ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

2347

ՅԻՍՆԱՄԵԱԿ

1860—1910

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵԿԱՆ
Տպարան Ս. Յ. Աւագեանի
1911

Нахичеванъ на Дону
Типографія С. Я. Авакова.
1911

12 JUL 2013

43.110



40707-63

Մի յոբելեար ևս և գուցէ ամենահամակրելին:
Դա Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն է:

Մայիսի 29-ին ս. Խաչ վանքում կատարվելու է այդ ընկերութեան 50-ամեայ յօբելեանը:

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մեր ամենաին ընկերութիւններից է.

Նրա կանօնադրութիւնը յօրինել է Ստեփանոս Նազարեանը:

Նրա 25-ամեակի պատմութիւնը գրել է Գամառ-Քաթիպան:

Եւ երկար ու ձիգ 50 տարիներ մեր Ընկերութիւնը վայելել է ժողովրդի յարգանքը և սէրը:

Բարեգործական նպատակով նա ծախսել է 200,000 ըուբի: Առաջին տարիները անդամները ծախսում էին քիչ, աշխատում էին աւելացնել մայր և պահեստի գումարները: Վերջին 20 տարիները մենք ծախսում ենք աւելի, քան թէ ունենք եկամուտ. և սակայն մեր պահեստի գրամագլուխը հասնում է 65 հազարի, մայր գումարն է 4000 ըուբի:

Բարեգործական Ընկերութիւնը առանց խորութեան օգնել է ամեն մի հայի, լիներ նա Նախիջևանցի, թէ կովկասցի, ողջ մէկ է, և արձագանք է տուել հայկական կեանքի բոլոր թէ փոքր, թէ մեծ երևոյթներին:

Նա կանգնել է տեղիս դպրոցի շէնքի երկրորդ յարկը, ծախսելով միանուագ 10,000 ըուբի:

Նա լոյս է ընծայել Գամառ-Քաթիպայի անտիպ երկերը:

Նա լոյս է ընծայել մեծ երկհատորով Միքայել Նալբանդեանի բոլոր երկերը:

Նա տուել է և տալիս է ուսում հազարաւոր հայ մանուկների:

50 տարվայ միջոցին շատ արտասուք է նա սրբել, շատ վերքեր բուժել, շատ ցաւեր դարձանել և թեթևացրել:

Բայց գլխաւոր նպատակը, ամենամեծ նպատակը եղել է և կը մնայ տարածել լոյս, հալածել հայկական խաւարը:

Մայիսի 29-ին Նոր-Նախիջնանի ս. Խաչ վանքում կատարվելու է Բնկերութեան յոբելեանը:

Յարգենք նրան, պատւենք սիրով, երախտագիտական բուռն զգացմունքով:

Հանենք գլխարկներս և ցածր-ցածր խոնարհենք մեր գլուխները յոբելեարի առաջ:

Նա հասել է մեզ մեր տրամութեան և թշուառութեան ծանր օրերին:

Լինենք նրա հետ նրա ուրախութեան օրը:

Նա մեր ամենահամակրելի յօբելեարն է: (Ար. Մշակից)

Գր. Զալիսուշեան

Նոր-Նախիջնան.

ՆՈՐ-ՆԱԽԻՋՆԵԱՆԻ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

25-ԸՄԵԸՑ ՑՈՒՑԵԱՆ

Խմբագրեց Ռափայել Պատկանեան:

Ծառայել հասարակաց օգորին... բարեգործել... թէ՛ այս եւ թէ՛ այն սուրբ զործեր են, եթէ նոցա կառաջնորդեն անկեղծ զգացմունքը եւ համոզմունքը,

ԱԲԲԱՏ ՀԱՄԲՐՈՒՀԻ

ՄԱՐԴՈՒԹՄԱՅ ՀԱՐՄՇԴՈՒԹՎԱՅ

ԽԱՐԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅ

Առ Ամենային հայության

Ֆրան Ամերիկայի բնակչության
պահանջման մասին առ Ամերիկայի
օրդինատ մայության շահագործության
պահանջման մասին առ Ամերիկայի

ԽԱՐԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅ

Յաղդի բերմամբ մեզ վիճակուեցաւ գրել պատմութիւնը
մեր ազգի այն հագուաղէպ սխրագործութիւններէն մէկին, որոյ
մասին գաղափար տալու համար կարող ենք նորան նմանացնել
միայն Մխիթարեանց Ուխտի և կամ Լաղարեան ձեմարանի հիմ-
նարկութեանցը.

Նոր Նախիջևանի ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
անշուշտ, մեր ազգի ամենագեղեցիկ և ամենապահծալի գանձե-
րէն և ժառանգութիւններէն մէկն է:

Եթէ հեռատես Հոգաբարձուք Բնկերութեան նոյն իսկ խան-
ձարուրքի մէջ գանուած վայրկինին, չուզային գորա ամեն պատ-
մական եղելութիւնքը անջրելի փաստերով և ջինջ աղբիւրներէ
ժողովել տալու, համոզուած ենք, որ 20—25 տարիէն, անշուշտ,
գոյ պիտի շրջապատուէր առասպելական թանձը մթնոլորտով, ինչ-
պէս որ այդ կըպատահի ամեն ինչ սխրալի գործերու ծագման
հետ մէկ մանուկ ազգի մէջ, որն ժամանակաւ կըյդանայ և կը
ծնի վէպեր ու վիպասանութիւններ:

Ժողովրդի բերանացի պատմածը, նորա հայեացքը, նորա
իւր վրայ ընդունած ապաւորութիւնը այստեղ պահպանած են
նոյն անպաճոյճ պարզութեամբ, ինչպէս որ խկապէս է, և յան-
ցանք կը համարուէր, եթէ այս գեղեցիկ գէպքը զարդարուէր ճար-
տասանական սիթեհթեալ ձեկով և քերականական ոճերով, նոյն
և նման այնպէս, ինչպէս որ անտիկական անդրիները այժմուայ
նորածն զգեստներով պաճուճելը աններելի և ծիծաղելի գործ է:

Ներգործող անձանցէ մեծագոյն մասը մինչև այս օրս կեն-
դանի են և, լինելով մեր ծանօթները և բարեկամները՝ մենք
ամեն օր դիպուած ունինք լսելու պատմութեանս մանրամասնու-
թիւնքը և ստուգելու պատմածքի և արձանագրութիւններու
ճշտութիւնը: Ուրիշն ներողամիտ ընթերցողը կարող է վստահ
լինել, որ պատմութեանս ամեն մի տող հիմնուած է անջրելի
փաստերու և ապացոյցներու վրայ: Եւ վերջապէս, ինչ պատճառ,
կամ ինչ հնար ունէինք աղճատելու գէպքի ճշմարտութիւնը,
մինչ մեր գատաւորք, այս ըուպէիս են ոչ մի կամ երկու ան-
ձինք, այլ վեց կամ հօթը հաղար հոգիէ բաղկացած մի ամբողջ
ժողովուրդ:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

մասնառոր եւ հասարակական:

Եթէ մենք կ'ընդունինք, որ մարդու բաղկացած է մարմինէ
և հոգիէ, եթէ կ'ընդունինք, որ մարդուս մարմինը ունի իւր
հարկաւոր պահանջները, ուրեմն այն ևս պէտք է ընդունինք. որ
հոգին ալ ունի իւր պահանջները: Ինչպէս որ սնունդը, շարժ-
մունքը, քունը հարկաւոր են մարմինը առողջ պահելու համար,
այնպէս ալ հոգւոյ համար հարկաւոր են հոգեկան սնունդ, որոյ
մէջ է նաև զութը: Ինչպէս որ ցուրտը, քաղցը, խոցը, հիւանդու-
թիւնները կըտանջեն մարմինը, այնպէս այլ գոյժը, տրտմու-
թիւնը, զբարաւութիւնը, մերձաւորներուս թշուասութիւնը կը
տանջին մեր հոգին և այսպիսի հոգեկան տանջանքը մենք կ'ա-
նուանինք զութ: Մեր հոգին՝ տանջող գութէն աղատելու համար
մենք ուրիշ հնար չունինք, բայց եթէ մեր մերձաւորին նորա
կրած տանջանցներէն աղատելու, որ կ'ասուի բարեգործութիւն:
Ուրեմն՝ զութը զգացմունք է, իսկ բարեգործութիւնը՝ այդ
զգացմունքի մարմնանալը:

Ես ձեռքս հաց բռնած կ'ուտեմ: Իմ մերձաւորը, որ չունի
հաց՝ վրաս կընայէ և ես նորա աշքերէն կընկատեմ, որ նա ևս
կ'ուզէ ունենալ այդ հացէն ու ինձ պէս ուտել: Ի՞նչ կըզգայ իմ
մերձաւորը: Ես գիտեմ նորա զգացածը, վասն զի եղել է ժամա-
նակ, որ ես ալ տիսել էի ինչպէս մարդուն մէկը կ'ուտէր հաց.
Ես այդ հացէն չունէի և նորա վրան նայելով չարաչար կը տան-
ջուէի: Եւ այժմ, որ ես իմ մերձաւորին քաղցած կըտեսնեմ՝ իմ
այնժամանակուայ կրած տանջանքս միտքս կուզայ և հոգիս նորէն,
կըտանջուի: Օտարի քաղցը իմ զութը կըշարժէ. օտարի քաղցը ինձ
կըտանջէ. օտարի չքաւորութիւնը, տուայտանքը, տառապանքը ինձ
կը չարչարեն ու ներսս գութ ըլսլրտի. հոգիս զգացած գութը ինձ
չի տալ հանգստութիւն: Հոգիս տեսնել չուզէ օտարի նեղութիւնը,
տանջանքը. հոգիս բարձրաբարբառ կըխօսի մէջս և կըբողոքէ. նա
ինձմէն կըպահանջէ, որ ես օտարին աղատեմ նրա կըրած տան-
ջանքէն, և մինչև որ նորա կամքը և հրամանը չի կատարեմ՝ նա
չի հանդարտիլ Ես ստիպուած եմ հոգուս հանդարտեցնելու հա-
մար՝ նրա պահանջը կատարել: Եւ այն բաւարարութիւնը, որ ես

կուտամ հոգիին՝ կ'սառւի բարեգործութիւն։ Ուրեմն բարեգործութիւնը բնածին է մարդուս, վասն զի մարդս բաղկացած է ոչ միայն մարմինէ, այլ հոգիէ ևս։

Եւ այսպէս՝ հոգին իւր անդորրութեան համար կըպահանջէ, որ քաղցածը յագենայ (կշտանայ), մերկը հագուի, հիւանդը առողջանայ, լըքուածը, անտէրը պատոպարուի։

Մէկ անհատը կ'անէ այնքան, որքան որ նորա կարողութիւնը կընասնէ. բայց գորանով աշխարհի քաղցածները, մերկերը, անտէրները չեն երջանկանալ, անթիւ անհամարները կը մնան անայցել, թշուառ։ Ուրեմն ի՞նչ պէտք է անել։

Այն ժամանակ իմ վրդոված հոգին կըպահանջէ ինձմէն, որ ես միւսներուն ևս յորդորեմ անելու այն, ի՞նչ որ ես ինքս արի։ Ես իմ շուրջը կըդողովեմ իմ գրացիներուն, բարեկամներուն, ծանօթներուն, քաղաքակիցներուն և կըսկսիմ նկարելու թշուառականներու վիճակը ու գոյներով և կըշարժեմ նոցա գութը։ Մենք կըմիաւորուինք, ոյժերս, նիւթական կարողութիւններս կը միացնենք և շատ կարօտեալներու շատ անհատներու օգնութիւն կընացնենք։

Այսպէս կըծագի հասարակաց բարեգործութիւնը։

Թէկ մարդկային առաջին պիտոյքն են՝ սնունդը, հագուստը և բնակարանը, բայց կան շատ ուրիշներն ես, որոնք ոչ զոցանէն պակաս բուռն պահանջներ ունին և կ'ազգեն մեր հոգու վրայ։

Ահա օրինակ։ Զինուորները մէկ շղթայակապ թշուառականի կըտանին դատաւորի մօտ։ Փողոցի տղայք մասով կըցուցնուն նորա վրայ ու կ'ասեն՝ «Նայեցէք, նայեցէք՝ ահա զող տւազակին կըտանին դատելու ու դատապարտելու»։

— Ի՞նչո՞ւ գողութիւն ու աւազակութիւն արել է այդ մարդը, կը հարցնում ես։

«Եորա համար, կըպատասխանին ինձ, որ նորա կնիկը ու զաւակները ցուրտ տան մէջ մերկ ու քաղցած էին, ու ինքն ալ նոցա խնամելու հնար չունէր»։

— Ուրեմն, միաք կ'անեմ ես, այս մարդուն չքաւորութիւնը ստիպել է զող, աւազակ և պատճապարտ լինելու։ Եթէ նա չքաւոր չըլինէր՝ չպիտի գողութիւն և աւազակութիւն անէր և չի պիտի դատապարտէր չարաչար պատուհասի։

Ես կը շարունակեմ հարցմունքս փողոցի մարդոցմէն։

— Ի՞նչո՞ւ այս մարդը (գողը) հնար չունէր իւր ընտանիքը խնամելու, իսկ ուրիշները ունին։

«Այնոր համար, կըպատասխանին ինձ, որ դա չուզէր և կամ չգիտէր աշխատելու, իսկ այլը կ'ուզին և դիտեն։

— Ի՞նչո՞ւ չուզէր կամ չգիտէր, կըշարունակեմ հս հարցնել։ «Այնոր համար չուզէր նա աշխատելու, որ ծոյլ էր. և չգիտէր այնոր համար, որ փոքր ժամանակէն սովորած չէր», կըպատասխաննեն ինձ։

Եւ ես գարձեալ կըշարունակեմ ինքս ինձի խորհելու՝ «Եթէ մարդ ծոյլ է և աթէ փոքր հասակէն աշխատանք չի սովորիլ նա անշուշտ քաղցած կըմնայ։ Ուրեմն ծոյլերը և տգէտները հարկաւ իրենց բոլոր կեանքը կարօտութեան մէջ պիտի մնան. կարօտութիւնը նոցա յանցանքի մէջ պիտի գլորէ, իսկ յանցանքը միշտ պատժի ու երբեմն ալ մահապարտութեան պիտի հնթարկէ նոցա։ Դարձեալ իմ հոգին կըկորցնէ իւր անդորրութիւնը. այժմ նա կըտանջուի մարդուս ոչ քաղցած, մերկ կամ անտէր լինելու համար, այլ որ նա ծոյլ է և աշխատելու ընդունակ չէ։ Թէկ իմ ունեցած միջոցներս մէկ երկուսի պէտքերուն կըրաւականանայ, բայց քաղաքի բոլոր կարօտեալներուն օգնութիւն հասցնել կարող չիմ. ուստի հարկաւ պիտի դիմեմ ձեռնտուութեան իմ մերձաւորներուն, որ միացեալ զօրութեամբ այս թշուառականներուն նպաստ հասցնենք։

Ահա արդէն լայնացաւ բարեգործութեան ասպարէզը և զարձաւ աւելի նուրբ և աւելի նպատակայարմար։ Այժմ մինը օգուտը հասկացանք և հնարին գտանք ոչ թէ քաղցած կշտացնելու. և մերկին հագցնելու, այլ և մարդուս այնպիսի վիճակի մէջ գնել, որ նա ինքը հոգայ ոչ միայն իւր, այլ և ընտանիքի հացը, հալաւը և ընակարանը ձեռք բերելու։

Մէկ ուրիշ գէպը ես։ Աղքատին մէկը մէկ հարուստ մարդու կըյայտնէ, որ նա մէկ ընդունակ որդի ունի, բայց չունի կարսդութիւն նորան դպրոցի մէջ կըթելու, և կըխնդրէ նորա օգնութիւնը։

Հարուստը կըպատասխանէ նորան՝ «Գնահ կորին ինձմէն, ես ի՞նչ պարտական եմ օխտնօտարի զաւակին կըթութիւն աալու. եթէ զաւակ ունենալ զիտես՝ ուրեմն ինքդ ալ աշխատէ նորան կըթելու միջոցները գտնել։ Ես քեզ համար աւելորդ ստակ չունիմ»։

Վրայ անցան տանիեակ տարիներ։ Աղքատի որդին, մանկութեան օրերը օգտաւէտ ուսումէ և բարի օրինակներէ զըրկուած՝ մեծ ճամփու վրայի աւազակ դարձաւ. իսկ հարստի որդին, հօր նման, հարուստ վաճառական եղաւ. Մի օր գիշերուայ ժամանակ, անտառի մէջէն անցնելով, հարստի որդու վրայ յարձակուեցաւ աւազակներու խումբ, որի պարագլուխը լիշեալ չըշաւորի որդին էր, և նորա հետ ունեցած բոլոր ինչքը կողոպտեց իրեն ալ սպանեց։

Հայրը լսեց այս բօթը. սկսաւ լավ ողբալ և իւր չար առաջի վրայ գանգատիլ:

Այժմ ևս կըհարցնում մենակ աւագակն էր մեղաւորը նորա որդու աղետալի մահուան. ինը հայրը բոլորովին անմեղ էր այդ չարաշուք դէպքի մէջ...

Այս աղետալի արկածքը խելօք մարդոց խոկմունքի մէջ կըձգէ. նոքա իրար հետ խօսելով և խորհրդակցելով այն եղբակացութեանը կուգան, որ աւելի օգտաւէտ է մեղ համար օր առաջ անբաղներուն դառն վիճակէն աղատել քանթէ երեսի վրայ ձգած, անտէր թողնել նոցա:

Ահա, ևս առաւել լայնացաւ բարեգործութեան ասպարէզը, և մարդիկ նկատեցին, որ բարի գործերը ոչ միայն լաւ է, այլ և կարի հարկաւոր է ոչ միայն իրենց կարօտեալներուն, այլ և մեղ հարուսաներուն համար:

Այսուհետեւ արդէն գիւրաւ կըմեկնուի և կըհասկացուի գըպրոցներու, վարժարաններու, որբանոցներու, հիւանդանոցներու, անկելանոցներու, աղքատանոցներու և հազար ու մէկ տեսակ աստուածանածոյ բարեգործական հաստատութիւններու հիմնարկութիւնը:

ԵՐԿՈՒԻ ԽԾՈՎՔ

բարեպաշտորեան եւ հաւատի անտարելութեան մասին

Հայոց:

Առաջիկայ պատմութիւնս տակաւին չոկսած՝ իր ներածութիւն ցանկալի էր մեղ երկու խօսք ասել ազգիս մէջ նշխարած մէկ առաքինութեան մասին, որ պատուական ժառանգութիւն է մնացած մեր խելացի նախնիքներէն և որն գրիլէ իր հրեշտակ պահպան կանգնած է մեր Հայերու վրայ՝ ամբողջ 600 տարի ամեն օրուայ ամեն վայրկեանը փրկելով մեր աղջը ամենայն երեւլի և անհրեսյիթ թշնամիներէ այդ առաքինութիւնն է Հայերու մէջ խորունկ արմատ ձգած բարեպաշտութիւնը:

Զգիտենք՝ դարսւս շնչնչն է, թէ ժամանակակից փիլիսոփայութեան թիւի ըմբռնմունքը, թէ անցեալի տկար իմաստասիրելը, թէ ընդհանուր բարոյականութեան ապականութիւնը, թէ, վիրջտպէս, խելքի պակասութիւն. բայց կըօնական անտարբերութիւնը սկսել է խրամատելու մեր իրք—լուսաւորեալներու բարոյական շնչքը. եկեղեցի, աղօթք, պաս, ուխտ, բարեպաշտ ծէսեր, սրբազն աւանդութիւններ, մինչեւ անդամ Աստուծոյ բանը կորցրել են նոցա առջե իրենց սրբութիւնը. և այս նկատելի է մասնաւանդ բարձրագոյն ուսումնաբաններէ ուսումնաւարտների և այնաւել երթևեկողների մէջ: Այդ շատ մեծ ցաւ չէր, եթէ այդքանով սահմանափակուէր մեր տարաբաղդութիւնը (երկբայութիւնը սկիզբն է հաստատուն հաւատին), ցաւ է խոստվանելն, որ այս մոլորութիւններէն ապատ չեն մինչեւ անդամ մեր կղերականք, սրոնք ըստ երևութիւն, ամբակուռ սիւներ պիտի լինէին մեր եկեղեցուն: Այս աններելի սառնութիւնը գէպի ամենասուրբ զգացմունքն, որպիսին է կըօնը, մարդիկ կ'անուանեն ազստամութիւն, կարծես թէ իւր սուրբ նախնեաց նուիբական համարուած բաներն արհամարհին, ծաղրին, պղծելն մարդկային մտաց ազնիւ ձգտումն է, կըրավամատութիւն է, առողջամտութիւն է:

Վազուց արդէն ասած է, որ հաւատաը եթէ քննուի, հետագօտուի, գատմունքի տակ ընկնի՞նա հաւատ չէ: Միայն հաւատովն է, որ բարոյական աշխարհը յակաստանի կայ, եթէ կորչի հաւատ՝ աշխարհիս երեսին բար քարի վրայ չի մնալ կըկորչին օրէնք, կըկորչին տերութիւնը, կըկորչին ընտանեկան յարաբե-

Հային իւր եկեղեցիէն զուլս փրկութիւն չկայ:

Եղբայր հայեր՝ ամուր պահպանենք մեր պաշտելի նախնիք-ներու սուրբ աւանդութիւնները՝ չիկարմբինք իմաստակներու ծակ-փիլիսոփայութիւններէն, ազօթքով սկսենք մեր ամեն գործը, հաւ-ւատով և յուսով յարատենք, և կըտիմնենք որ նա փառքով և օրհնութիւնով կըպսակուի: Դաստիարակութիւնը, կըթութիւնը, լուսաւորութիւնը միայն այնժամանակ արգասաւոր են, եթէ նո-քա ամրացած են կրօնի հիման վրայ: Աշխարհքիս երեսին ան-կրօն ազգ կամ ժողովուրդ չէ կարող լինել, և եթէ լինի՝ նա չի ասուիլ ազգ, այլ աւազպակաց խումբ, թէ ազգի, թէ ժողովրդի և թէ գերգաստանի ամուր պահողն է ոչ զէնքը, ոչ ոյժը և ոչ հա-րսաւթիւնը, ա՛լ կրօնը միայն:

ԲՆԵԿՐՈՒԹԵԱՆ ԺԱԳՈՒԹՄՆ: Անկարս առա

ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺԱԳՈՒԹՄՆ

(1860).

1860 թուի փետրուարի 26-ին մի սովորական, առօրեայ, կարելի է ասել մի չնչին դէպք, որն մեր քաղաքի մէջ օրուայ միջնցին գրեթէ տասնական անգամ կլապատահի, մի երեկի, հըռչակելի, անմահ գործի ծագման պատճառ եղաւ վերին Նախախնամութեան կամքով, Նախախնամութեան, կ'ասեմ, որ երբէք մեր թշուառ, բայց ամեն կարեկցութեան արժանի ազգին անխնամ, անայցել անպատասպար թողած չէ:

Այդ, ապկիս համար անսմռանալի օրը՝ մի խեղճ մարդ, մականունը Կոռէլ, “մտաւ Քայեալեան Մանուկի խանութը և ոզբրմութիւն խնդրեց, ասելով թէ՝ ահա քանի օր է նրա ընտանիքը ցուըտ տան մէջ սոված կեցել են, և ոչ ուստէք յոյս չունին մարդկային օգնութիւն ստանալու:

Այդ միջոցին յիշեալ խանութիւն մէջ ներկայ գտնուել են նաև յիտապայ անձինք՝ Պետրոս Քէչէճեան, Քերովը Մուլտչայ-եան, Սարգս Ալչեան, Գէորգ Հալլաճեան և Կարապետ Խալայ-ճեան։ Սոքա ամենքը զբեթէ հասակակից և ամենքն առոյգ պատահիներ էին. ընտական է, որ մերձաւուրի տարաբաղդութիւնը նոցա վրայ խոր տղաւորութիւն պիտի անէր և նոցա սրտերէն բարձրածայն արձագանդ պիտի հանէր։

Եթէ երբ և իցէ մարդուս գեղեցիկ յատկութիւնները դուքս
կը բղիսն նորա մէջէն,—այդ, աներկըայ, նորա պատահնեկալան
հասակն է, որն, ինչպէս ծաղիկը գարնան ժամանակ, հանգէս
կուզաւ իւր ամին գեղեցիկութեամբը:

Երանի մարդուս այդ հասակին... բայց առաւել ելանի այն մարդուն, որ այդ հասակի մէջ այնպիսի գործեր ունի կատարած, որն չափահասութեան և ծերութեան օրերն պարզերես կարող է պատմելու՝ ի խրատ իւր համազգիներու մատաղերամ զաւակացը:

Առաքինութիւնը կենդանի օրինակով կը ծաւալի ազգի մէջ և ոչ թէ խըստով, քարոզով կամ հրամանով։

Այս թշուառականի ողորմելի արտաքինը տեսնելով և նորա

պատմանը լսելով՝ հինգ պատահիք իրար երես նայեցան, իբր թէ կը հարցնէին ի՞նչ հնարքով օգնենք սուրան:

Բայց այստեղ երկար տատամասութեան կամ որևէ է հնար որոնել պէտք չէր: Հայի շատ գեղեցիկ յատկութիւններէն մինչ է նորա ողարձածութիւնը, որով, կարելի է ասել, նու կը գերազանցէ աշխարհիս ամեն ազգերուն, ոչ բացառելով մինչև անգամ անգլիացիներուն:

Եւ արդարիկ հայերուս համար մէկ սովորական բան դարձած է ամենայն օր լսել թէ՝ այս ինչ մարդը արև ինչ գործի համար ժողովարարութիւն կ'անէ. իսկ այս ինչ անդ այս ինչ ազգային ձեռնարկութեան համար ստորագրութեան թուղթ կայ. նմանազէս ամեն փաքրիշատէ բազմամրսիս խումբի մէջ հային մէկը, ամենի մատղութիւնը գէղի իրեն դարձուցած, համոզելով, յորդորելով, աղաչելով կը ինդրէ այս ինչ խեղճն, այս ինչ պանդխատին, այս ինչ թշուառականին օգնելու: Եւ լսողք կամաւորապէս կամ քովի կեցողէն քաշուելով (ամաչելով), առաստապէս կամ սակաւ չափով կուտան, կուտան, կուտան և կուտան. Ո՞ր տարիքէն սկսել է հայ մարդը տալու, եթք պիտի վերանայ նորա վրայէն այս կամաւոր բարոյական հարկը, որ իւր քանակովն ոչնչով պակաս չէ տէրութեան ամենածանր հարկէն—մինք չգիտենք. միայն այս գիտենք մինք, որ իթէ ամեն մէկս սրտերս չի խստացնէինք, եթէ սոսկալի, սարսափելի, ըլսամնելի թշուառութեան առջև կամաւորապէս աչքերս չի փակէինք, չտեսնողս չի ձեանայինք, առանց այլեայլութեան, ամենիս ընտանիքը այսօր—վաղը ժամի գրանը մուրալու աստիճանին պիտի համենէր, այնքան շատ է թիւը մեր համազգի տարարազգներուն և այնքան միծ է ազգիս պիտոյքը:

Ի՞նչ է գորա պատճառը:

Դորտ պատճառը այն է, որ մեր ազգի բազմութեան առջև ապրուստի և բարուքման ամեն գոներ փակուած են, և նորա հանդէպ երկու անազորոյն պայմաններ կամ՝ կամ առուայտանքի մէջ ազգովին հալումաշ լինել և կամ իւր սուրբ կրօնը, նուիրական ազգային ծէսերը, հայրենաւանդ լիզուն, միով բանիւ այն, ինչ որ ազգութիւն կը կոչուի՝ ուրանալ...

Հայը չուզէ վերջինը. ուրեմն առաջմանը ծանրացած է նորա վրայ, որ արգէն հասուցել է միդ մինչև մեր գերեզմանի գուռալ:

Ի՞նչ պէտք է անել:

Ահա հարցմունք, որի պատասխանը վեց հարիւր տարիէ կը կնուրէ մեր ազգը և չի գտնիւ:

Ոմանք քարոզեցին թէ՝ այս ընդհանուր թշուառութեանէն ազատուելու համար պէտք է ուսումն: Եւ յանկարծ ամեն տեղ կախարդական զօրութիւնով հազարաւոր մեծ ու փոքրիկ գպրոցներ, ուսումնարաններ բացուեցան՝ բիւրաւոր աշակերտներով:

Ոմանք ասացին թէ՝ պէտք են քարոզիչներ: Եւ ամենափոքրիկ գեղերի մէջ քարոզիչներու ձայնը լսուեցաւ:

Ասացին թէ՝ պէտք է մամուլ: Եւ ահա հայախօս թառցիկ թերթերը սկսած մուտ դործելու ամեն ծակ. ուր միանդամ ուղարգել էր հայի ոտք:

Ասացին թէ՝ պէտք է բեմ: Ես տհա ցորենի ամբարները և աղբանքի մթերանոցները կերպարանափառուեցան հայկական թատրօն, և անմեկնելի հրաշըով հանդէս հկան հայ հեղինակներ և հայ գերասաններ. քաղեցին հանդիսատեսների ծափահարութիւնը և քամիցին նոցա արտասունքը:

Ասացին թէ՝ պէտք են նահատակներ: Եւ Արդրումի, Վանի բանտերը լցուեցան նոր Վարդաններով, նոր Գարեգիններով, նոր Ղեոնդ երեցներով, ինչպէս որ երբեմն Յազկերտի օրովն...

Բայց ոչինչ, ոչինչ ոչինչ չօգնեց:

Ի՞նչու:

Ո՞վ կը մեկնէ մեղ այս չարաբասափիկ առեղծաննելիքը. ով կը քակէ հայերու առջև կեցած այս. նոր Գորդեան հանգոյցը... ով արեէ անցած բազմափորձ ծերունին...

Ե՛ղբայրներ՝ յիշենք Յիսուսին և գլուխներս ծռենք նորա աստուածային խորհրդաւոր խօսքերու առջև. «Գահանամ զքէն հայր՝ աէք երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի զիտնոց, եւ յայտնեցեր տղայոց»:

Եւ իրաւ որ, ինչ հազարաւոր բիւրտուր փորձառու ալշզարդ ազգապիտներ, խելօքներ, ազգէս պատուած անձինք կ'որոնէին, և որի վրայ խելք կը մաշին, այն բանին հասու եղան և զրեթէ գտան ժողովրդիս զրեթէ ամենասատոր գտակարգէն գուրս եկած, անուս, մտտազանաս, անփորձ անձինք, որոց մարգային միակ և միակ արժանաւորութիւնն էր միամնութիւն, այսինքն այն բանը, որին աշխարհիս Փրկիչը կ'անուանէ անօթ ընտիր, նոր տիկ, զիացիր՝ այնպիսի մարգային յատկութիւն, որն ընդունակ է ըմբռնելու աշխարհիս նոր գտակարգները և կրօնի անպատճոյճ իմաստը առանց խելքի զօր տալու, պարզապէս հասկանալու:

Բայց թէ ի՞նչպէս իրագործուեցաւ այդ վեհ գործը, ներողամիտ կարգացողը կը տեսնէ յընթաց այս պատմութեանը:

Կոռէլ մականունով աղքատը իւր խնդրածը ստացաւ և գնոց

բանին, բայց նորա կատարած ծանր տպաւորութիւնը պատահիւներու զգայուն սըրտերէն չփառատեցաւ, և նոքա խոր խոկմունքի մէջ ընկան՝ թէ միթէ նախիջևանի մէջ այս թշուառական Կուէլէն զատ ուրիշ կարօտեալներ չիկան, միթէ նոցա անինամ պիտի թողնել. միթէ միայն այն մարդուն պիտի համարիլ կարօտեալ և ամեն կարեկցութեան արժանի, որն որ գոնէ գուռն կըմուրայ. միթէ սակաւ մարդիկ կան, որոնք մորսլու ոյժ և համարձակութիւն չունին, թէպէտ և նոցա տանջող կարօտութիւնը ոչնչով պակաս չէ աղաջող պաղատողէն և ժողովրդին ձանձրաց նողէն. և միթէ այդքան անբաղդներու կարիք կըլցուի, եթէ ամեն անզամ խանութէ խոնութ վագեն, մէկին—միւսին ինսդրեն, յորդորեն, համոզեն: «Եկէք, եղբարբ, ասացին սոքա իրար, մի մէջ կամաւոր և կանոնաւոր տուրբ սահմանենք և անդամակից դասնանք մէկ որոշ բարենպատակ ուխտի»:

Այս և այսպիսի խորհրդածութիւնները նոցա հետեւալ եղացացութեան բերեց, որ այս պատահիների մէջէն երկուսը՝ Պետրոս Քէչէճեանը և Քերովբէ Մուրատչայեանը յանձնառուեղան քառասունի չափ բարեպաշտ անձինք գանելու, որոնք կըյօժարէին ամսէ ամիս 25-ական կոպէկ վճարելով՝ կազմել մի փոքրիկ տասը մանէթնոց գումար, և այդ գումարով խնամել մի չքաւոր ընտանիքի պիտոյքը:

Այս պիտի լինէր սկիզբը նոցա աստուածահանոյ ձեռնարկութեան, և առ ժամս նոքա այսքանով պիտի սահմանափակէին իրենց բարեպաշտութիւնը, և սորանից վեր ձգտումներ չունէին:

Հետեւալ օրը, որ էր շաբաթ օր, երկու հոգի՝ Պետրոս Քէչէճեան և Քերովբէ Մուրատչայեան սոին մէկ տետր և սկսան խանութէ խանութ շրջել և ցանկացողներուն ստորագրել տալ, և իւրաքանչիւրէ ստանալով մէկ-մէկ մանէթ՝ ժողովեցին քառասուն մանէթ: Իւրաքանչիւր ստորագրողի մէկ մանէթը պէտք է համարել անդամակցութեան 4 ամսուայ վճար, վասն զի տարեկան բաժանորդագինն էր երեք մանէթ: Տարեկան 3 մանէթ հատուցանելը շարունակուեցաւ մինչև 1866 թիւն, այսինքն մինչև կանոնադրութեան ծրագրի հաստատուելն. յետ այսորիկ անդամակցութեան տարեկան գինն եղաւ 5 մանէթ կամ սուպլի:

Ողորմածութիւնը, ինչպէս որ վերը ասուեցաւ հայի երակորդ բնութիւնն է դարձած: Անշուշտ կրօնը և նորա վարդապետութիւնը այստեղ հզօր գեր ունին, նոյնպէս և անդի—աշապետութիւնը այստեղ հզօր գեր ունին, նոյնպէս և անդի—աշապետութիւնը գիտի երեսը թէ. կրօնի սկզբունքը թէ իմանալով որ՝ բայլն միշտ բարի է, ինչ շարժակիթ կ'ուզէ ունենայ, նոյն և նման այն բանին թէ ինչ որ տաղի վրայ և նայես՝ ամենըն ալ գէպի երկինք կըտանեն:

են միակ գրգիչը և ոչ ուրիշ զգացմունքներ՝ սաստիկ կըսխալինք: Եթէ այդ կէտէն նայելու լինինք՝ մեր վեհազնեայ կազարեան, Ռափայէլ Խահրամանեանը, Մասեն Բաբաջանը, Մկրտիչ Կոկոյեանը և այլք մի մի հոգեսէր ճգնաւորներ պիտի լինէին, և ոչ թէ բաղաբագէտ, հեռատես, հանձարիմաց աղքասէրներ, ոչինչով նուասս քան դիւցազունք հին և նոր դարերուս, թէկ մի այլ և աւելի համեստ ասպարիզի մէջ:

Այս պատահիներու նորակազմ փոքրիկ ուխտէն առաջ միթէ ժողովուրդը չունէր գաղափար ընկերովի ողորմութիւն անելու. Ո՞վ լսած չէ մէկ ժամանակուայ Նոր-Նախիջևանի բազմաթիւ էսնափներու անունը և գործունէութիւնը, այն էսնափներու, որոնք ունէին իրենց գարերով սրբագրութուած օրէնքները, իրաւունքները և պարտաւորութիւնները և իւրովսանն ժողովրդին հասուցած ելափակը: Մենք այստեղ դիտաւորութիւն չունինք զրելու պատմութիւնը այս գնդեցիկ գասակագին, որի ծաղկած միջոցին ծաղկած էր մեր Նախիջևանը և որի անկման միջոցին ընկած պիտի համարել նորան. մենք այստեղ կ'ուզէինք միայն յիշել նորա անթիւ կարգագրութիւններէն մինը, որիմէն օրինակ տառաւ այս նորածին ընկերութիւնը: Ցիշիալ էսնափները սովորութիւն ունէին հասարակաց գանձանակէն ժամանակաւոր նպաստաւ իրենց հիւանդ արուեստակցին: Խակ յատ նորա մահուան մինչև նորա ընտանիքի սոքի կանգնելը, ամբողջ տարիներ հաս զալ նորա սրբացած կնոջ և զաւակների ամեն մի պիտոյքը:

Ահա այս էսնափներէն (կաշեգործ արուեստաւորը) առաջին նուագ օրինակ տիփն մեր տմեն յարգանաց արժանի պատահիները. բայց թէ նոքա ի՞նչ զգացմունքով էին վասուած՝ կրօնի, թէ մարդկային գերագոյն գաղափարներով—ես չուզեմ քնիել, քաջ իմանալով որ՝ բայլն միշտ բարի է, ինչ շարժակիթ կ'ուզէ ունենայ, նոյն և նման այն բանին թէ ինչ որ տաղի վրայ և նայես՝ ամենըն ալ գէպի երկինք կըտանեն:

Մեր բարի երիտասարդներին այն չէր արգելասիթը թէ հաւաքած ստակով ի՞նչ տեսակ բարեգործութիւն պիտի անել. նորա շատ լաւ գիտէին, որ ստակ ունենալէն յետ նոքա միշտ կարող են մի որ և է բարեգործական ասպարէզ գտնելու, նոցա այժմ կըդժուարացնէր այն հանգամանքը թէ՝ ի՞նչ հնարքով այս նորածին գաղափարն ժողովրդի աչքին պատուաւոր ձև տան, վասն զի, այնժամանակ ևս գտնուել են մարդիկ, որոնցմէ ոմանք տգիտութեամբ և ոմանք նախանձով աշխատել են պէս պէս կծուխութերով կոտրել սոցա վհատեցնել և գործէն գաղաքեցներ ասելով թէ՝ «ի՞նչ պիտի զայ այս անփորձ, անվարձ և

անհան պատանիներու ձեռքէն», և կամ տեղի քան դայս կծու խօսքերով և կասկածներով:

Առաջին նոցագ մեր պատանիներու բոլոր հոգուը նորա վրայ էր դարձած, որ նոցա ձեռքի հանգանակութեան (ստորագրութեան) տետրը օրինաւոր ձեւ ունենայ. և դորա համար նոքա կարմոր համարել են այդ տետրը ժամակաինեալ գարճնելու: Նոցա կարծիքով այդպիսի իրաւունք, այսինքն՝ տետրը ժամաւինելու, տուած է եղել կամ քաղաքագլխուն, կամ հոգեոր կառավարութեանը և կամ որ և է պաշտօնատեղիի: Բայց մինոյն ժամանակ ինքները իրենց մէջ վճռել են, որ ոչ քաղաքագլուխը յանձն կ'առնու ժամաւինել նոցա տետրակը, ոչ հոգեոր կառավարութիւնը և ոչ մի պաշտօնատեղի՝ արհամարհուա աչքով նայելով նոցա երեխայական ձեռնարկութեան վրայ: Ուրեմն ինչ անեն, որի՞ն գիմեն, որիմէն օգնութիւն և նպաստ զանեն: Այդ վարանաց միջոցին նոքա յիշել են Պօղոս քահանայ յանձնեանին, որն Ք. Մուրատչայեանի մերձաւոր բարեկամն է եղել և որն (տէր Պօղոսը) այդ միջոցին իւր պաշտօնակիցներու մէջէն ամենէն բարեսիրար, յարգելին և փորձառուն և այդ տեսակ ժողովրդական բարեպաշտ գործերու սիրողն էր համարուած, որ, անշուշտ, նոցա ձեռնարկութիւնը սիրով կ'առնու իւր հովանաւութեան տակ ու իւր ձեռքէն եկած ամեն օգնութիւնը կը հասցնէ թէ գործին և թէ գործողներուն: Ինչպէս ասել են, այնովէս ալ արել են: Փետրուարի 28-ին գնացել են նորա մօտ, մանրամասնաբար պատմել են նորան այն երեք օրուայ անցքը և քառաւուն մանէթ ստորագրութեամբ ժողովիլը, և այն:

Տէր Պօղոսը, լսելով նոցա պատմածը և տեղիկանալով գործի էտթեանը, գովել է նոցա հանրաշան ձեռնարկութիւնը, յօժարութիւն յայտնել է ժամաւինելու ստորագրութեան տետրակը, խոսացել է ոչ միայն իւր հովանաւութեան ներքոյ առնեւ այդ գործը, այլ և իւր կողմանէ ևս նիւթապէս օգնելու. բայց երիտասարդներէն միայն մի կարեոր պայման պահանջել է, այն է՝ ոչ ամեն ստացած փողը մի անզամով մախել այլ նորա մի մասը ի պահեստի ունենալ իրը մայր գումար, թէեւ քանակով անհշան:

Երբ որ երիտասարդները ցանկութիւն յայտնեցին որտեղ կատարել նորա խորհուրդները, աէր Պօղոսը օրհնեց թէ երիտասարդներուն և թէ նոցա ազնիւ գործը, առժամայն ժապաւինեցաւ նոցա ստորագրութեան տետրակը (տօմարը) և իւր կողմանէ ևս ընծայեց մէկ մանէթ: Իսկ մի քանի օրէն աւելցուց վրան մի օրհնութեան թուղթ, որն ահա առաջ կ'բերենք այստեղ բառ առ բառ և տառ առ տառ:

՚ի նոր-Նախիջնամն ՚ի 1860 ամի եւ յունվարի մէկին *).

«Սկսեալ խորհուրդ արարաք ՚ի միջի մերում քանի մի սիրելի եղբարք որք յամէ ՚ի յամ զողորմութիւնս հաւաքել հանդիքեալ առաջարկաւ յանուն մերս եղեալ քաղաքիս չքաւորաց և կարօտելոց զատուածահաճոյ զողորմորթիւնս բաժանելը ըստ չափու կարողութեան մերոյ. բայց յայսցանէ վերոյ յիշեալ անձանց, ով ոք ընդունակ համարեցի զայս խորհուրդ մեր, նա կարէ ստորագրել յայսմ տումարիս առանց երկրայութեան յանուն իւր իւրաքանչիւր ամիս հատուցանելով քսան հինգ (25) կոպք արծաթիւ:


40704-67

«Ուրեմն խնդրեմք և խնդրեցաւք Ամենալարձրեալն զԱստուած և զամենակարով զՓրկիչն մեր Յիսուս Քրիստոս, Հոգւոյն սրբոյ շնորհիւն կարողացուք յասաջակայ զբարեալ մաղթութիւնս մեր աղերսելով զամենագութն Աստուած. տացէ մեզ կարողութիւն, յասողութիւն, յաջողութիւն և եղբայր սիրութիւն, որ յուսով և սիրով կատարել զբարեմաղթանս մեր մինչև ՚ի կէտկոչման մերոյ. Ամեն. վասն որոյ և ստորագրեմք»:

Քերովքէ Մուրատչայեան
Սարգիս Ալշեան
Պետրոս Քէչէնեան
Յովհաննէս Անէմնան
Լուսելին Սատէթեան

Տէր-Պօղոսին գնացող երիտասարդները վերագառնալով դէպի իրենց ընկերները, պատմեցին նոցա այս տեսակցութեան ըուրա հանդամանքը և ցուցին ժամաւինած տետրակը և մեր առաջ բերած օրհնութեան թուղթը, և ամենքը խոսացան հետեւելու տէր-հօր տուած խրատին և խորհրդին: Եւ տեսնելով իրենց ձեռնարկութիւնը այսպիսի կանոնաւոր ձեւ ստացած՝ նորա արգէն հարկաւոր համարեցին իրենց մէջէն ընտրել գործող անձինք. և անյաղաղ Պետրոս Քէչէնեանը միաբան հաւանութեամբ ըն-

*) Թէպէտ, ինչպէս պատմութենէս կերեի, ընկերութեանս ծագումը տեղի ունեցաւ 1860 թուականի փետրուարի 26-ին և այս թուղթը տէր-Պօղոսը զբեց նոյն ամսուայ 28-ին, ըաւուն ամ, իրեն կարծիքով, գործին կանոնաւոր ձեւ տալու համար նշանակեալ այսակը գույքը պատահած երկու ամիս առաջ, այսինքն տարուայ սրբանակ Այս համարմանը չիպիտի շփոթէ և վարանց մէջ ձգէ մեր յարգել ընթիցողներուն:



արուեցաւ ընկերութեան գանձապահը, ստացաւ ստորագրութեամբ ժողոված 30 ռուպլին *) և պարագաներուցաւ շահեցնելու տարեկան 10 % (տոկոսով):

Տեսրակը ժաղարինելէն յետ ստորագրողաց (անդամոց) թիւը արագ-արագ սկսաւ շատանալու, վասն զի ժողովուրդը արդէն սկսել էր գործի վրայ հաշտ աչքով նայելու, տեսնելով նուրան մի պատուաւոր անձի հովանաւորութեան ներքոյ:

Այդ միջոցին ընկերութեան անդամներէն մինը մատնացոյց եղաւ մի խեղճ, երեք որբով ծանրաբեռնած այրիի վրայ, որին այցելութիւն էր գնացել և անձամբ տեղեկացել էր նորա չքաւուրութեանը: Այս այրին առաջինը եղաւ, որ սկսաւ նորափթիթ ընկերութեան բարեպաշտ առատածենութիւնը վայելելու, իւը տնական պիտոյքի համար ամսէ ամիս ստանալով 10-ական մանէթ: Այս այրիի մականունն էր Սուիչէզելիան:

Հանդանակութեան լայն ասպարէզ տալու և անդամակցաց թիւը բազմացնելու դիմամբ ընտրուեցան Քերովքէ Մուլատ-չայեանը, Սարգիս Ալչեանը, Լուսեղէն Սատէթեանը, Յովհաննէս Սնէմեանը և Մկրտիչ Գասպարեանը (այդ միջոցին, ինչպէս վերը յիշել ենք, Պետրոս Քէչէճեանը գանձապետ էր ընտրած) որոց պարտաւորութիւնն էր անդուլ և անխոնջ շրջել ամեն տեղ, յորդրել, համոզել մարդոց մատնակցելու այս աստուածահաճոյ և բարեպաշտ գործին:

Իսկ և իսկ այդ խորհրդով Մ. Գասպարեանը, քանի մի օրէն, գնաց Նախիջևանէն երեք վեռով հեռաւորութեամբ ոսւսաց Ռոստով քաղաքը, ուր առուտուրի պատճառով կը կենային մօտ հարիւր հոգի հայք՝ մասամբ բոլորովին, տնով-տեղով և մասամբ միայն ցերեկները, իսկ զիշերները կը վերադառնային իրենց բնիկ տեղը—Նախիջևան: Պարոն Գասպարեանը գնաց մի նախիջևանցի հայ վաճառականի խանութ և, ինչպէս վերը պայմանած էր, խնդրեց նորան այս նորածին ընկերութեան անդամակցելու: Ռոստովաբնակ հայ վաճառականը շատ չնչին, ծիծաղելի և անհիմն գործ համարելով այս աղնիւ երիտասարդների ձեռնարկութիւնը, առաւ գրիչը և ընտրեալների անուանց վրայ՝ ինչպէս արհամարհելի մարդոց, խաչածե նշան գծեց, ինչպէս որ սովորութիւն կայ վաճառականների մէջ, երբ մի գրուած բան կ'ուղեն ոչնչացնել սխալ կամ անպէտք համարելով վրան խաչ կը քաշեն:

*) 10 ռուպլին արգէն տուած էր Սուիչմէզելիան այրիին իրը ամսական թոշակ:

Մկրտիչ Գասպարեանը վհատած սրտով վերադարձաւ Նախիջևան և պատմեց ընկերներուն այս նախատինքը. և ընկերներէն ոմանք վշտացան, ոմանք բարկացած և պատրաստ էին արդէն յուսահատուելու, ելր նոցա մէջէն գուրս եկաւ մէկը և ասաց «Ե՛զբայրներ՝ մի վհատիք (սիրտերդ թող չի կոտրի), այն մարդը թէկ կամեցաւ մեղ և մեր գործի հետ թշնամաբար վարուելու, և մեր ձեռնարկութեան վրայ խաչ քաշեց, այսինքն՝ ոչնչացուց. սակայն այստեղ մենք պիտի նշանաբնք Սստուծոյ մատը: Այս խաչը մեր նորածին ընկերութեան համար խորհրդաւոր է: Իմացած վինինք, որ Սստուծ ուղարկեց նորան, (այսինքն խաչը) իրբե օրհնութիւն և պահապան մեր տկար գործին»: Ասաց և ջերմեռանգութեամբ համբուրեց այդ գծած խաչը. և միւս ընկերները, հետեւելով նորա օրինակին նոյնը արին և միարեան տասցին՝ «Թող խաչը մեղ օգնական լինի»:

Քանի մի ամիս ընկերակից երիտասարդների գործը եղաւ հանդանակութեամբ փող ժողովելը, անդամակիցների թիւը բազմացնելը և այրի Սուիչմէզեանին աղբուստի համար ամսէ ամիս խոստացած ստակը տալը:

Ամառուայ մէջ մէկ օր, տէր Պօղոս Խաճեանը հանդիպելով այս ընկերակից երիտասարդներէն մէկքանիսին, հարցուց նորակողմ ընկերութեան որպիսութիւնը, ասելով *):

«Ետի, տղաք, գործերդ ի՞նչպէս է:

— Շատ աղէկ է, պատասխանեցին երիտասարդները:

«Հ՞ը, տեսաք, ի՞նչպէս աղէկ էղաւ, որ խօսքս լսեցիք: Տահա կեցէք, քանի էրթայ՝ տահա աղէկ կ'ըլլայ, էտի, ի՞նչ պիտի անիք այսուհետի»:

— Ի՞նչ պիտի անինք, գործերս աղէկ է, Սստուծ յաջողից: Ուրիմն գորա պատիւին Սուրբ Խաչ ***) պիտ էրթանք: Սստուծոյ պատարագ անիել պիտ տանք, որ խաչը մեղի օգնական էղաւ ***):

*) Ինչպէս այս տեղ, այնպէս ալ շտա տեղ մենք աշխատել ենք գործիս վրայ եղած զրոյցը խօսողի խականի բարակրովն արտադրելու, որպէս ասկացըց թէ՝ մենք նըբան ճշմարտութիւնը կը գերադասենք պիրճախօս մտացածին ստութեան: Բոլոր պատմութիւնը մենք վրել ենք կամ գործող, կամ ականատես անձանց բերանացի պատմելովն կամ ժամանակակից արձանագրութիւնը անձամբ իմաստասիրելով:

**) Սյստեղ Սուրբ-Խաչ պիտի հանկանալ այս անունով վանքը, որ Դվոսթ հետի կեցած է Նախիջևանէն մէկ բարձրաւանդակի վրայ, թէմէնիք գետակի աջակողմը:

***) Ումանք կասեն թէ՝ ընկերութեան ուխտագնացութիւնը գէպի Սուրբ-Խաչ վանք յարաբերութիւնը ունի ոսուովցի հայ վաճառականի ընկերակցաց անունները խաչածե չնչիուներն են, միւսները կ'ասեն թէ՝ պայտակէս անձնանուած է: թէկ այսպէս ասողներ և թէ այլապէս հաստատոնիք շատ կան և ամենքը բարեխիղճ անձնանք են: Դժուար էր մեր մինը և ընդունել միւսը: Մհնք անա երկուսն են՝ Դյուիշէնը, հաւատալը և շնուատալը թաղնելու ընթերցակի ընտրութեան:

«Ո՞վ պիտի անէ (մատուցանէ) պատարագը», հարցուց տէր-Պօղոսը, (Այս հարցմունքը շատ բնական էր և շահասիրութեան ակնարկ չէր տէր-հօր կողմանէ, վասն զի այդ միջոցին, Սուրբ Խաչ վանքի մէջ, արտաքոյ սովորութեան, վանահայր չի կար):

— Ի հարկէ դուն պիտի անիս. քեզիմէն աւելի մենք որին ունինք մեր գործին մէջ աշխատաւորը, պատասխանեցին երաւասարդները:

Եւ իրաւ որ՝ յընթացս տասնըչորս տարուան տարէց-տարի, անդամակիցներու բազմութեան ներկայութեան տէր-Պօղոսը պատարագ կըմատուցանէր, և յետ պատարագին մատաղ կըբերուէր: Պատմութեանս մէջ տառնձին գլուխ նուիրած կըտեսնէ ներողամիտ ընթերցողը այս ժողովրդական նորամուտ տօնախմբութեան մասին, որ այժմ փառայեղ, հանդիսով կըկատարուի Հոգեկալտեան տօնի օրը:

Նոյն տարուայ յուլիս ամսու մէջ բարեպաշտ երխտասարդները որոշեցին իրենց մէջ գոհացողական պատարագ մատուցանել տալ, ինչպէս որ ուխտել էին Սուրբ-Խաչ վանքի մէջ:

Այստեղ կ'ուղէինք երկու խօսք ասել հայոց բուն ժողովրդի մէջ մաքուր պահպանուած կրօնական ջնրմիունդութեան մասին:

Զգիտենք՝ դարսու շնունջն է, թէ ժամանակակից փիլիսոփայութեան թերի ըմբռնմունքը, թէ անցեալի տկար իմաստասիրելը, թէ ընդհանուր բարոյականութեան ապականութիւնը, թէ, վերջապէս, խելքի պակասութիւն, բայց կրօնական անտարբերութիւնը սկսել է խրամատելու մեր իրր—լուսաւորեալների բարոյական շէնքը, եկնղեցի, ազօթք, պաս, ուխտ, բարեպաշտ ծէսեր, որբազան աւանդութիւններ, մինչև անդամ Սատուծոյ բանը—կրցրել են նոցու առջև իրենց որբութիւնը, և այս նկատելի է մանաւանդ վերին ուսումնաբաններէ ուսումնաւարտների և այնտեղ երթևեկողների մէջ: Այդ շատ մեծ ցու չէր, եթէ այդքանով սահմանափակուէր մեր տարաբազութիւնը (երկբայութիւնը միկրոն է հաստատուն հաւատին). ցմւ է խոստովանեն, որ այս մոլութիւններէն աղատ չեն մինչեւ անդամ մեր կղերականը, որոնք ըստ երեւթին ամրակուռ սիւնք պիտի լինէին մեր եկեղեցուն: Այս աններելի սասնութիւնը գէպի ամինստուրք զգացմունքն, որպիսին է կրօնը, մարդիկ կ'անուանեն աղատամութիւն, կարծես թէ իւր սուրբ նախնեաց նուիրական համարած բաներն արհամարհելը, ծաղրելը, պղծելն մարդկային մոքի:

աղնիւ ձգտումն է, կորովամտութիւն է, առողջամտութիւն է: Վաղուց արդէն ասած է, որ հաւատը եթէ բննուի, հետազոտուի դատամունքի տակ ընկնին նա հաւատ չէ: Միայն հաւատով է, որ բարոյական աշխարհը յակաստանի կայ, եթէ կորչի հաւատ՝ աշխարհիս երիսին քար քարի վրայ չի մնալ. կկորչին օրէնք, կըկորչին տէրութիւնք, կըկորչին ընտանեկան յարաբերութիւն, և մարդկութիւնը գազանաց կարգը կ'ընկնի: Հաւատը, կրօնը եթէ շրջապատած չինին սուլր և նուիրական աւանդութիւններով, արարողութիւններով, ծէսերով—նոքա ոչ այլ ինչ կըլինին, բայց եթէ աննշանակ խօսքեր, դատարկ ձայնիր. որքան սուլրը են մեզ համար Սատուծոյ և Քրիստոսի խօսքերը, նոյնքան սուլր պիտի լինին և մեր պաշտելի նախնեաց աւանդած ծէսերը՝ աղօթքը, օրհնութիւնը, ուխտագնացութիւնը, պասերը, տօները, և այլն, և այլն, որոնք միայն հաւատը կըտարբացնին մեր մէջ, չոր ու ցամաք զգացմունք չեն թողնուլ նորան մեր մէջ և մեր կիանքը կ'անեն նպատակաւոր, իմաստալից: Մենք չուզենք այստեղ հաւատի վրայ անվերջանալի բանակուռութիւն բանալ, չուզենք պաշտամնը հանդիսանալ: Եթէ բիւրաւոր նահատակներու գործքն ու խօսքը չհամոզեցին բթամիաններուն ու լրբերուն, ինչպէս կարող ենք մենք այժմ համոզել: Մենք միայն այս կ'ուղէինք ասել, որ եթէ մեր ազգի մէջ օրինաւոր, արդիւնաբեր, իրեն և ընկերներին օգուտ տուող մարդկի կան՝ այդ միայն նոքա են, որոնք նախնիներուս դաւանած հաւատը մանկական միամտութեամբ մաքուր պահել են իրենց մէջ: Զարմանալի երկոյթ, մենք տակաւին տեսած չենք մի հայ մաքդ, որ լինէր բազգաւոր, յաջողակ, յարգելի, հարուստ, խկապէս խելօք, խկապէս գիտուն, որ և ընդ նմին լինէր կրօնական խնդիրներու մէջ անտարբեր, ստունասիրաւ կարծես թէ անկրօնը, կամ գէպի և իւր եկեղեցին սասնահոգին իւր ճակատի վրայ թշուառութեան խորամուխ կնիք կըկրէ: Մանկութեան միջոցին մենք համոզուած էինք, որ քրիստոնեայ սուելով հայ պէտք է քրիստոնեայ հասկանալ: Հային քրիստոնէտական եկեղեցին գուրս փրկութիւն չիկայ:

Եղբայր հայեր՝ ամուր պահպաններ մեր պաշտելի նախնիներու սուլր աւանդութիւնները. չի կարմրինք իմաստակներու ծակ-փիլիսոփայութիւններէն. աղօթքով սկսենք մեր ամեն գործը, հաւատով և յուսով յարատենք և կը տեսնենք, որ նա փառքով և օրհնութիւնով կըպսակուի: Դաստիարակութիւնը, կրթութիւնը և լուսաւորութիւնը միայն այնժամանակ արգասաւոր են, երբ

նոքա ամրացած են կրօնի հիման վրայ: Աշխարքիս երեսին ան-
կրօն ազգ կամ ժողովուրդ չէ կարող լինել, և եթէ լինի՝ նո չի
ասուիլ ազգ, այլ աւազակաց խումբ: Թէ ազգի, թէ ժողովրդի և
թէ գերդաստանի ամուր պահպանողն է ոչ զենքը, ոչ ոյժը և ոչ
հարստութիւնը, այլ կրօնը:

Շարունակենք մեր ընդմիջած պատմութիւնը.

Նախընթաց երեկոյին ուղարկուեցան դէպի Սուրբ-Խաչ մա-
տաղի ոչխար, հաց և այլ խորտիկներ, որովէս զի հետեւել օրը,
կիրակին, ինքանք երիտասարդներն ևս երթան այնտեղ և յետ
պատարադին հիւրասիրեն մնացեալ ամեն անդամակիցներուն, և
յատկապէս այդ բանի համար իրենց մէջ առանձին վող ժողո-
վեցին:

Ինչպէս որ կանխաւ որոշուած էր, հետեւել օրը տէր-Պօ-
ղոս Խըռճեանը շատ փառաւոր կերպով կատարեց պատարագի
սուրբ խորհուրդը. և երբ ամենքը եկեղեցին գուրս եկան և
մտան վանքի խուցը՝ այնտեղ ճաշի վրայ խօսք բացուեցաւ թէ
այսուհետեւ ի՞նչ անուն պիտի կը ըէ այս նորածին ընկերութիւնը,
կամ ի՞նչ անունով պիտի շարունակուի անդամկցութեան սոս-
րագրութիւնը: Ումանք ասացին թէ՝ պէտք է «Աղքատաց խնամա-
կալութիւն» անուն կը նա, այլը ասացին թէ՝ «Գանձարան հա-
ւատոյ» անուն տանք նորան. բարի և միամիտ երիտասարդ-
ները խորհրդատուների սիրու կոտրել չուզելով՝ յօժարեցան այդ
երկու յորջորջմունքն ես գրել իրենց ժապաւինած տօմարի ճա-
կատին:

Այդ ուրախալի օրը, դեռ ևս ճաշի սեղանի առջե նստած,
շատ բարեմաղթութիւններ կատարուեցան նորածին ընկերու-
թեան, շատ յոյսեր դրուեցան նորա վրայ, շատ թեթևութիւններ
ակնկալուեցան հայ աղքատներուն, չքաւորներուն և տառապեալ-
ներուն համար. բայց այդ համեստ երիտասարդների երեակայու-
թիւնը երբէք չըհամարձակեցաւ մի օր տեսնել այն նախանձելի
վիճակի մէջ, ուր նա կայ այս վայրկենիս, այսինքն՝ դարձած
մեր ազգային հազուագիւտ ժառանգութիւններէն եթէ ոչ ամե-
նագերազանցը, գոնէ ամենազերազանցներէն մէկը: Եւ այս, որ
կըտեսնենք՝ ընկերութեան ծագմանէն միայն քսան հինգ տարի
անցածն է. կարո՞ղ է երեակայել մէկը, որ եթէ այս ընկերու-
թիւնս այլ ևս քսաննինդ կամ յիսուն տարի սոյն այս եռանդով
տուած տարուի՝ ի՞նչ պատկեր պիտի ձեւացնէ..

Երեկոյեան գէմ, դեռ ևս բաղաք չի վերտարձած, երիտա-

սարգնելէն վեց հոգիք, սանկուլոքէն *) վայր իջնելով, մնաս բա-
րե ասելու ժամանակ, երեսները դարձուցած վանքին՝ ծունը
զրին և ջերմեռանգութեամբ քանի մի անգամ երեսները խաչա-
կնեցին, և սարկաւագը «Էջ միածին ի Հօրէ» երգեց, և նոքա-
ուխտեցին, որ եթէ ընկերութիւնը հաստատուն մնայ և շարու-
նակուի, հետեւալ տարիները, ըստ օրինակի այս տարուան, բազ-
մութեամբ ընկերաց դարձեալ կուգան այստեղ, պատարագ մա-
տուցանել կուտան, մատաղ և հացկերոյթ կըպատրաստեն:

Այսպէս՝ 1860 թուականը անցաւ, նախ Սուիչմէզեան այրիի
խնամատարութուամբ, երկրորդ՝ ընկերութեան անդամակիցներու
թիւը մինչ 95-ի հասցնելով, երրորդ՝ Սուրբ-Խաչ վանքի պատա-
րագ մատուցանելով և ուխտ կատարելով, և չորրորդ՝ նորածին
ընկերութեան անուն պարզելով, որով այս անորոշ ժողովը ըն-
կերութեան կիսապաշտօն ձեւ և բնաւորութիւն ստացաւ, և այդ-
պէսով սկսաւ յարդ և վարկ գտնելու քաղաքացոց աչքին:

*) Հեռաւոր համազգիներու մեր պատմութիւնը հասկանալի գարձնելու-
համար ոլէտք է ասենք, որ Սուրբ-Խաչ վանքը հիմնած է բաւականին բարձր
քարածայոի վրայ մօտ 13—15 զրկաչափ բարձրութեամբ. իսկ նորա սոսորո-
ւոր, այսինքն թէմէնիք գետակի ձորի մէջ փոռուած է վանքապատկան պար-
տէզը՝ շըջապատած իւր գաստակերտներով, սեխաստաններով,
և արօտաելուներով և գիւղատնեսական շէնքերով: Սուրբ-Խաչի շըջակայքը
նախիջնացոց սիրելի ամարանիքն է՝ մաքուր և առողջարար օդի պատճառաւ:

Այս անցքէն յետ 3-4 տարի անցած երախտագէտ երիշտասարդները միաք կ'անէին տէր Պօղոս Խոճեանին այս նորածին ընկերութեան վրայ ունեցած երախտիքի համար մէկ վայելուչ կերպով վարձատրել այս դիտմամբ երկու աղերսագիր յօրինեցին, մինը Մատթէոս Կաթողիկոսի և միւսը այն ժամանակուայ Նախիջևանի և Բեսարարիոյ թեմական առաջնորդ Գորշիէլ վարդապետ Այվազովսթիյի վրայ, առաջինէն ինդրելով յիշեալ քահանայի համար քահանական խոչ և կամիլտեկա և երկրոգէն՝ աւագ-քահանայութեան աստիճան։ Ասաջին նուազ, ըստ տեղական սովորութեան, յիշեալ աղերսագիրներն անէ տուն շըրջեցուցին՝ ժողովրդի սոսորագրութեան համար. բայց յետոյ այդ տեկորդ համարուեցաւ, վասն զի երախտագէտ ժողովուրդը չի սպասեց, որ իւր սիրելի քահանայի մասսարի թուղթը իւր տունը ըերեն, այլ ինքը յօժարակամ և խմբովին զիմեց սոսորագրելու այն խանութն, որ կար թուղթը. սոսորագրողաց թիւըսարդէն հասել էր 120-ի։

Այս լուրը հասնելով այն ժամանակուայ քաղաքագլխի ականջը, որն այդ միջոցին ժողովրդի երկասատկութեամն *) պատճառաւ, տէր Պօղոսի վրայ, ինչպէս Խալիպեան կուսակցութեան համակրողի՝ զայրացաւ և ուզեց արգելը դնել այդ պարզեաւ տրութեան, և նմանեցնելով երիտասարդների բարեխօսութիւնը օրինաց հակառակ գործի՝ դատարանի դռնապանին (պէշլի) ուղարկեց Քերովը Մուրատչայեանի մօտ և սաստկապէտ ողահանջեց, որ հետը առնու յիշեալ երկու աղերսագիրներն և անյապաղ դայ ներկայանայ իրեն...
*) Այս անախորժ զէոքը յայտնի է «Խալպեան և Հայլապետեան կը-սիւ» անունով։

Եթէ ներկայ ժամանակուայ գաղափարներով և հայեացքներով գատեելու լինինք մեր քաղաքագլխու և ժողովրդի յարարերութիւնը՝ սաստիկ կըսխալինք։ Մարզով պէտք է յետ թոչել 25 տարի գորամէն առաջ և հասկանալ նախիջևանցոց տասներկու տարի ճնշուած և ահարեկուած վիճակը *** ի կառավարութեան միջոցին, որ հասկանանք թէ՝ ինչ պիտի զգար խեղճ երիտասարդ Ք. Մուրատչայեանը, երբ նորան գոնապանը հրաւիրեց քաղաքագլխու մօտ... տուգանք... բանգարգելութիւն... աքսոր և այլն, այս ամենը շատ հեշտութեամբ կարող էին անցնել նորա մտքէն...
Իւր հետ առնելով այլ ևս երեք հոգի և յիշեալ երկու աղերսագիրները՝ գնաց ողորմելի երիտասարդը քաղաքագլխի տուն։

Երբոր երիտասարդները ներկայացն քաղաքագլխին՝ նասկաւ նոցա նախատելու ինքնակամ այլպիսի ապօրինի գործ կատարելու համար, և սաստից նոցա օրէնքի նշանակած պատուհանով, որ կարող էր նոցա հանդիպել և թէ նոքա անյապաղ իրին ներկայութեանը չըպատռեն այդ քաղմասառուագիր աղերսը առ վեճափառ կաթողիկոսը. իսկ որ ինչ կըվերաբերուէր Գարբիէլ վարդապետ Այվազովսթիյին զրած աղերսագրին՝ նա ոչինչ չըպահանջեց. բայց թէ ինչու—մինք չըգիտենք. թէկ կարելի է պահապան հաւանական ենթագրութիւններ անել, բայց ընդ նմին յաւելցուց, որ եթէ նոքա (երիտասարդը) կըյօժարեն յիշեալ բարեխօսութեան աղերսագիրը ինքնայօժար կամքով ոչնչացնել՝ այն ժամանակ նա ինքը (այսինքն քաղաքագլխունը) իւր կողմանէ ամեն հնար և ջանք ի գործ կըդնէ՝ այդ նորածին ընկերութեան կանոնաւոր կերպարանք տալու, կրկին և կրկին սաստելով, որ եթէ տանց օրինաւոր թոյլառութեան շարունակուի ընկերութիւնը՝ նա բոնի կըխտիանէ։

Երիտասարդները կարծելով որ յամառութիւնով կարող են իրենց սիրելի ձեռնարկութիւնը մեծ վասնգի մէջ գլուրելու, իսկ եթէ քաղաքագլխու կամքին հնապանգին՝ գործը յաջողութիւն կըստանայ, թէկ սրտի կալիծով, բայց յօժարեցան Վեճափառ կաթողիկոսին գրած միջնորդութեան աղերսագիրը տեղնիտիղը պատուելու Եւ ի վարձատրութիւն այս հնապանգութեան նոքա հրաման ստացան քաղաքագլխէն, որ անյապաղ սկսեն իրենց ընկերութեան կանոնագրութեան ծրագիրը յօրինել և աշխատել ուստի որ հարկն է նորա հաստատութիւնը ստանալու։

Այսքան եղաւ քաղաքագլխի ձեռնառութիւնը այս գործին. բայց շատ կարելի է, որ այն ժամանակուայ խառնափորութեան պատճառաւ նա այդ ընկերութիւնը, եթէ կամենար ալ, ոչինչով օգնել չէր կարող Միայն մինք այսքան զիտենք, որ

գործը սկսուեցաւ և ի կատար հասաւ մեր մի քանի երիտասարդ՝ ներու անխոնջ աշխատամբով և անդուլ ձգտունքով դէպի իրենց առաջադրած նպատակը, զրեթէ ոչինչ օգնութիւն չի ստանալով քաղաքիս մհծատուններէն, որք մինչեւ կառավարութիւնէն հաստատութիւն ստանալն մէկ անմեկնելի անտարբերութեամբ կը վերաբերուէն այս տմինապնիւ գործին:

Եւ այսպէս բազմերախտ տէր Պօզոսը, ընկերութենէն բոլորովին անկախ պատճառներով, առ մհծի տրամութեան բոլոր անդամակից երիտասարդներուն, ոչ վեհափառ կաթողիկոսէն ստացաւ վարձատրութիւն և ոչ վիճակաւոր առաջնորդ Գարրիէլ վ. Այվազովսքիէն:

Քաղաքագլխէն վերադարձած երիտասարդները սկսան մտածելու թէ՝ թնչ եղանակաւ յօրինեն և կառավարութեանը հաստատել տան այս՝ իրենց ընկերութեան համար կարեոր ծրագիրը. վասն զի ժամանակը շատ ողաոր և խանութնդոր լինելով և տէլութեան մէջ տեղափակ ապստամբութիւնը ծագելուն պատճառ, այդ միջոցին վարչութեան պաշտօնեաները թէ մասնաւոր ընկերութիւններու և թէ որ և է բարեգործական նպատակաւ փող ժողովելու վրայ սաստիկ կամկածով կը նայէն, այնպէս որ՝ քաղաքագլխու խիստ վարմունքը երիտասարդներու հետ մասամբ իւիք հասկանալի կը թուի:

Ընկերակիցներու այսպիսի տառապեալ միջոցին պատահեցաւ նոցա անդամակիցներէն մէկը՝ պարոն Յակոբ Քայիալեանը, որն տեղեկանալով ընկերներէն գործի կնճուռած վիճակին, տասց որ նա ունի մի գիտնական սուս բարեկամ, անունը Պաթաշով, որ կարող է այդ ծրագիրը յօրինելու, և խոստացաւ անպատճառ այդ բանը գլուխ բերել: Երիտասարդները շնորհակալ եղան և բոլորովին միամտուեցան ընկերութեան վիճակի մասին:

Պարոն Քայիալեանի խնդրանոք պ. Պաթաշօվը արգէն սկսել էր յօրինելու կանոնադրութեան ծրագիրը, որ նախիջեան եկաւ վիճակիս տառաջնորդ Գարրիէլ վ. Այվազովսքին: Ընկերութեան անդամակից շատ երիտասարդներ, յաջողակ դէպք համարելով այս, իսկոյն այցելեցին նորան և իրենց ընկերութեան գործի էութիւնը մանրամասնաբար պատմելով՝ խնդրեցին նորան չի խնայել, ուր և տառջի որոց հարկն է, իւր ջանքը, միջնորդութիւնը և բարեխօսութիւնը: Գարրիէլ վարդապետը, իրազեկ լինելով նոցա բարի նպատակին ևս և այն վատնգին, որ կար ընկերութեան առջև տէրութենէն հաստատուած կանոնադրութիւն չունենալուն պատճառաւ՝ խոստացաւ իւր ձեռքէն եկած ամին օգնութիւնը հասցնել նոցա, և որովհետեւ ինքը շուտով գնալու էր Ս. Պետերբուրգ, միամտեցուց նոցա անձամբ տալ աղերսագիրն նա-

խանարին և բաւարար պատասխան ստանալով նորանէն՝ նոյնպէս տնձամբ բերել սոցա հաստատած կանոնադրութիւնը, որով այս երիտասարդների գործունէութիւնը օրինաւոր ճանապարհի վրայ պիտի գրուէր. միայն թէ, պատուիրեց նոցա, քանի որ ինքը մայրագաղաք կը լինի՝ ձեռագիրը անպատճառ իրեն հասցնեն, եւ յիրաւի որ, այս տեսակցութենէն յետ շուտով մեկնեցաւ նա Ս. Պետերբուրգ, և նորա գնալէն յետ 3—4 օր անցած նորա անուամբ ճանապարհ ձգուեցաւ պ. Պաթաշօվի յօրինած կառուագրութեան ծրագիրը ուսւներէն գրած:

Վրայ բաւական շատ ժամանակ անցաւ, այսինքն մօտ 3 կամ 4 տմիս, երիտասարդները ան ու գողակ կեցած էին՝ արդիօք թնչ եղաւ ծրագրի վիճակը, արդիօք հաստատեցին, արդիօք մեր գործին անհամապատասխան բան գտան նորա մէջ, արդիօք Գարրիէլ վարդապետը ներկայացուցմէլ է, թէ մոռացել է, կամ իրը մէկ չնչին, ուշագրութեան անորման բան մի կողմ ձգել է, և ինքն ալ մոռացել է երիտասարդներուն տուած խոստմունքը: Երբ որ սոքա այսպիսի վարանքներու մէջ կը ծփային, յանկարծ մի օր տէր-Պօղոսը Գարրիէլ վարդապետէն ստացաւ, մի նամակ, որի բովանդակութիւնը, մի անաշառ ականատեսի ասելովն *) այսպէս էր՝ «Պատուելի՛ Հայը, տակաւին Պետերբուրգ էի, որ ընկերութեան նախագիծը (ծրագիրը) ստացայ. բայց ոստիկանին (նախարարին) չմտառցի. ասացին թէ՝ ժամանակու խիստ է: Պէտք է մատուցանել նախի կուսակալին, յետոյ նախարարին և ապա կը պահանջուի իմ միջնորդութիւնը», և այլն:

Այլապէս ասելով՝ երիտասարդները պէտք է Այվազովսքիէն յօյսերը կտրէին և որոնէին ուրիշ հնար և ուրիշ ճանապարհ իրենց նույիրական նպատակին համար կատար: Այս համակէն գոնէ այն իմացան, որ նոցա աղերսը աստիճանաբար պիտի ընթանայ. այսինքն ստորին աստիճանէն գէպի վերնագոյնը, և նոյն ճանապատճանով պիտի ստացուէր պատասխանը: Սորա համար պէտք էր աղերսը աղերս և երկար ժամանակ, որոց համար անձեռնաս էին խոնջացած և յօյակը յաճախ խարուած երիտասարդները. և աղերսագաբար զրկուած էին ծրագրի մի հատիկ օրինակէն, որի պատճէնը չունէին: Պէտք եղաւ նորէն պարոն Յայիալեանի միջնորդութեամբ զիմելու պ. Պաթաշօվին և Յ. Պաթաշօվին մի ուրիշ օրինակ նոյն ծրագրին:

Երբ ծրագրի օրինակը երկրորդ անգամ նոցա ձեռք ընկաւ, երիտասարդները կամեցան իմանալու՝ արդիօք նորա մէջի բովանդակութիւնը մինչեւ որ աստիճան յարմար է իրենց պէտքին.

*) Այսեղ բառ առ բառ ասողի խօսքերն առաջ բերած են:

կըպատկանի՝ արդեօք վըսան աւելցնել հարկաւոր ինչ կամ մէջն հանել աւելորդ բաներ. և իլինց անձեռնաս համարելով՝ նուքա դիմեցին մի նախիջեանցի գրադէտի, որ հին ժամանակները տեղոյս դատարանի մէջ գրագրի պաշտօն կըվարէր և նորան հմուտ կարծելով այլպիսի գործերու մէջ՝ ինդրեցին, որ նա Պաթաշօվի յօրինած ծրագիրը տեղական ոլէտերին յարմարացնէ. և այդ գրագէտը, նոյն իսկ բնագրի վրայ իւր կարծած փոփոխութիւնները անելով՝ աղմատեց ձեռագիրը: Այս հանգամանքը իւր անձին նախատինը համարելով՝ Պաթաշօվը զայրացած յիտ պահոնչեց իւր յօրինած կանոնադրութեան ծրագիրը. երիտասարդները դարձեալ նեղ վիճակի մէջ ընկան և գործը անորոշ մնաց:

Այս ժամանակ այս խեղճ անձարացած երիտասարդներին օգնութեան հասաւ Նախիջեանի այժմուայ քաղաքագլուխ պարոն Գրիգոր Սալթիքեանը (իսկ այս անցքը պատահած միջոցին՝ բարեյաջող վաճառական, առաջնակարգ քաղաքացի, ենանդուն երիտասարդ և դիմագրաւ գործօն ամեն տեսակ ազգային ձեռնարկութեանց մէջ): Սորան ահա ընկերութիւնը ընտրեց իւր խորհրդարանի նախագահը և սորոն տանդեց հոգոը ծրագրի յօրինիլու: Պարոն Գ. Սալթիքեանի միջնորդութեամբ հանգուցեալ զիտնական Ստեփաննոս Նախարարնեցը յանձառու եղաւ յօրինիլու ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը, և յօրինեց իսկ, կամ ինչպէս կարծիք կայ թարգմանաբար վերածեց 'ի հայ գերմանիքնէն կամ ռուսերէնէն, բայց դարձեալ անուշ թողնելով Նախիջեանի տեղական պայմաններն:

Ստեփաննոս Նախարարնեցի աշխատասիրած ծրագրէն անփոփոխ մնացին այն կէտերը, ուր կըխօսուէր գրամագլուխ աճելու մասին. միւսները փոփոխութեան կամ միանգամայն ջընջուեցան տեղական պայմաններուն յարմար:

Նոյն ժամայն ընդհանուր ժողով հրաւիրուեցաւ, որն որոշեց յանձնաժողով կազմել, և այդ յանձնաժողովի անդամք ընտրուեցան յետագայ անձինը՝ Կարտուկեան Զորչովիեան, Յակոբ Քայեան, Քերովը Մուրատչայեան և Պօղոս Նազիրեան, և նոցա առջև գրամական վարձով պ. Մանուէլ Խելումեանը գրագիր կարգուեցաւ:

Ահա ոռքա որոշեալ օրեր կըմողովէին և պ. Գրիգոր Սալթիքեանի բերածը առջեները ունենալով՝ կըյօրինէին այն ծրագիրը կանոնադրութեան որն վերջ ի վերջոյ, Եամեայ յաջ և յանեակ խոտորմանը, ընկերութեան դրաւ ուղիղ և օրինաւոր ճանապարհի վրայ, տալով նորան անուն, գործունէութեան սահ-

ման, ներքին և արտաքին կանոն, տէրութեան հովանաւորութիւն, յաղահովութիւն ամեն երեկը և աներեսյթ վտանգներէ և կարգ, որ միշտ եղել է և պիտի լինի ամեն գործի հոգի:

1865-ին Ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը լիովին պատրաստուեցաւ և ներկայացաւ այնժամանակուայ քաղաքագլուխ հանգուցեալ Կարապետ Մարգարեան Հայրապետեանին, որն (ինչպէս ականատեսք մէզ պատմեցին) ձեռքն առնելով այն երեսը խաչակնքել է, տակը ստորագրել է իւր անունը և ազգանունը և ուղարկել է Եկատարինէուլաւու կուսակալին (Տունին-Պառօվլովիլի), որ նա ուր հարկն է՝ հասցնէ: Վրայ 4—5 ամիս տնցած յիշեալ ծրագիրը Պատերբուրգէն վերագարձաւ Նախիջեան և նախարարի կողմանէ այսպիսի առաջարկութիւն էր արած, որ եթէ անդամակիցը ընկերութեան կըկամենան հաստատութիւնը ի կողմանէ տէրութեան՝ պարտաւոր են քանի մի կարևոր փոփոխութիւնը անել նորա մէջ, որ

նախ անդամակիցը կարող են միայն Նոր-Նախիջեանի բուն ընտակիչքը լինել և ոչ օտար քաղաքացի, կամ օտար աշխարհի հայք.

Երկրորդ ընկերութեան կնիքը իւր վրայ չիպիտի ունենայ մեղուի ձեակերպութիւն, այլ միայն ընկերութեան անունը և հիմնարկութեան տարին.

Երրորդ՝ եթէ որ և է եղանակաւ ընկերութիւնը խափանուի հաւաքած փողը պիտի նուիրուի մէկ ուրիշ բարեգործական հաստատութեան, և այն:

Անդամակիցը անյատազ և միաբերան յօժարեցան նախարարի արած այդ առաջարկութիւններն ընդունելու, և սոյն այդ բովանդակութեամբ գրեցին նորան իրենց պատասխանը:

1866-ի յունիս ամսու մէջ հաստ Նախիջեան ի վազուց հատէ ըղձացած և սպասած թոյլատութիւնը առ մեծի ուրախութեան ոչ միայն անդամակիցներուն, այլ և բոլոր Նոր-Նախիջեանի բնակչացը: Նոյն տարուայ յունիսի 12-ին չքեղ հանդիսով կատարուեցաւ կանոնադրութեան նաւակատիքը:

ԲՆԿԵՐՈՒԹՅԵԱՆ ԳՈՐԾՈՒԻՆԻՌԻԹԻՒԹԻՒԹ:

Հաշիւներէն մենք արգէն պարզ կընկատենք, ուր վեց տարուայ միջոցին նախիջևանցոց մէջ բաւական մէծ մտաւոր յառաջադիմութիւն և բարոյական զարգացումն եղած է. ողորմութիւնը, գութը, բարեգործութիւնը հսկոյաբայլ առաջացած է, նրացած է, և եթէ այսպէս կարելի է ասել՝ խելացի է գարձած: Այժմ մարդիկ նկատել են, որ թէկ շատ մէծ քրիստոնէավայել գործ է քաղցածին կշտացնելը, մերկին հազցնելը, անտէրին պաշտպանելը, բայց առաւել օգտաւէտ է, առաւել ապահով է, առաւել աստուածահաճոյ է, ըստ մարթելոյն, թոյլ չըտալ մարդուս քաղցած, մերկ և անապաստան լինել: Ազնիւ բան է (այդ ով իրաւունք ունի մերժելու) չունիցողին տալ հազուստ, հաց և բնակարան, բայց առաւել հիմնաւոր, խելացի և նողատակայարմար է մարդուս տալ կարողութիւն չըդիմել իւր ձանձրացուցիչ պաղատանքովն ուրիշի նողաստին: Առա համար պէտք է լուսաւորութիւն, որոյ աղբիւրն են կրթութիւնը և դաստիարակութիւնը:

Եւ այդ իսկ գիտմամբ Բարեգործական Բնկերութիւնը նայն իսկ իւր մանկութեան օրերէն, մեր խելացի և բարեմիտ հայրենակիցք (ուրոնցմէ շատը այսօր կենդանի մեր մէջ են՝ վայելելով իրենց քաղաքակիցներէն պատիւ և յարգութիւն): Գրեթէ բոլոր ոյժը և ճիգը գարձուցել են՝ ժողովրդի մէջ զիտութիւն և լոյս տարածելու՝ դպրոցներու միջոցով: Նոյն իսկ տարին որոշել են չորս տղայ և չորս աղջիկ չըտառը ընտանիքներէ զետեղել տեղւոյս քաղաքական վարժարաններու մէջ և մի յառաջադէմ պատանիակ ուղարկել Մոսկուայի Վեհապնեայ Լազարեանց Ճեմարան, այս ամենի համար նշանակել են այնքան ապահովութիւն, որքան որ, այն ժամանակի ներելովն, կը հաւասարէր նոյն իսկ ամենահարստի իւր որդու վրա ծախսածին: Իսկ ինչ կը վերաբերի աղքատաց խնամակալութեանը, նորու այդ ևս անփոյթ թողած

չեն, այլ համաձայն իրենց կատարած սուրբ ուխտին, շարունակել են նոյնը անելու՝ մի ամբողջ ընտանիքի տալով այնքան, որքան որ ընկերութեան միջոցները ներել են:

Այդ միջոցին, 'ի հարկ է, քսան չորս հոգաբարձուաց մէջ եղել են անհամար բարի և օգտաւէտ առաջարկութիւններ, որոնք մտամբ իրենց անյարմարութեանց պատճառու մերժուել են կամ ապագային են թողած, և մտամբ անյապաղ ընդունուել են. բայց միխթարականը այն է, որ Բնկերութիւնը յընթացս զրեթէ քսան տարուան ոչ մի թիզ շեղուած չէ իւր նողատակէն, որ է պինդ խմբուել իւր կանոնադրութեան շուրջը, ամուր պահել նուրա սրբութիւնը, օր յաւուր բազմացնել անդամակիցներու թիւը. յաճախ խմբուելով, իրաբ հետ խօսակցելով, խորհրդակցելով՝ ուրոնել ապահով միջոցներ իրենց սուրբ նողատակին հասնելու, և որ ամենազիստուն է՝ ընկերակցաց բոլոր ոյժը թափել—Բնկերութեան նիւթական միջոցները բազմացնելու:

Շատ կարելի է ուր խիստ քննադատը գտնէր նախիջեանի Հայոց Բարեգործական Բնկերութեան մէջ ինչ ու ինչ թերութիւններ (արեգակի վրայ ևս արատներ կան). բայց չէ կարելի յակամայս չըյարգել նոցա ձգառումնը—օրինաւոր հարթներով բազմացնել անդամակիցներու թիւը և տճեցնել Բնկերութեան զրամագլուխը: Այս ձգառումնը կարելի է ասել, յընթացս քսան հինգ տարուան, ժողովրդի համար մի տհատկ գաստիարակութիւն դարձու, որով ընկերակցական յարաբերութիւնը սաստիկ յասաջացաւ նորա մէջ: Գրեթէ ամեն օր ժողովուելով մի որոշ տեղ և խօսակցելով Բնկերութեան զործելու մասին, անդամակիցքը իրար՝ ի մօտոյ իմաստասիրեցին, իրաբ զնահատեցին, ընկերութեամբ գործելու ոյժը հասկացան և իրենց մէջն զժութեան շատ պատճանեաներ հասացուցին:

Մենք այստեղ զիտաւորութիւն չունինք զրուատիք գրելու անդամակիցներու ընկերասիրական սգիին: Բնկերութիւն բառը արդէն ինքը իւր մէջ կը ըսկանակէ տատրինութիւնը՝ նորա ամեն զովանի մասներավ: Եթէ Բարեգործական Բնկերութիւնը բազկացած մօտ 500 հոգիէ, ահա 25 տարի կը յարատեէ ոտքի վրայ ամուր կանգնելու՝ կը նշանակէ որ 500 հոգի 25 տարի ասաքին նութեան ճանփու վրայ են: Դորւմէն աւելի զովանաք ևս չիմ ճանչնար. այստեղ ամեն զովանական խօսք տւելորդ է, վասն զի գործը ինքն իրեն, կեցած տեղը մէկ բարձրաբարսու և յարատե զովանաք է:

Ես չեմ տաիլ, որ նախիջեանի Բարեգործական Բնկերութեան անդամակիցք սուրբեր են, մէկ մէկ արդարամիտ անձներ են,

մէկ մէկ հերսոներ են, ամենելին նչ. բայց այդպիսի խղէալական ժողովուրդ չի գանուիլ ոչ մի աշխարհի մէջ թէ հին և թէ նոր, մինչե անգամ անդիպացիք և Հիւսիսային Ամերիկայի նահանգաց բնակիչները կատարեալ չեն. բայց նոքա օրէ օր իրար կրթելով, իրար վրայ ազդելով, իրար հետ խորհրդակցելով, միասին ժողովուած, մի տուարկայի վրայ մտքերը և ոյժերը լարած,—ահա այս միացած ոյժն և միենոյն տուարկայի վրայ գարձուցած միտքն է, որ նոցա հզօր կ'անէ: Նոյնը թէկ նեղ սահմաններով, թէկ փոքրիկ չափով կարելի է ասել Ընկերութեանս անդամներու վրայ:

Ժամանակն էր արգէն Նախիջևանի բնակիչներուն հասկանութու, որ Բարեգործական Ընկերութիւնը առ այժմս նոցա միակ, հարազատ, ազգային հոգալարձուն է, որ արթուն աչքով կըհսկէ ժողովրդիս ամեն կերպ պիտոյքի վրայ, կուգայ ժամանակ, երբ նա կըխնամէ Նոր-Նախիջևանի գաւակացը այնպէս, ինչպէս որ մի խելացի, հզօր և հարուստ հայր կըխնամէ իւր հարազատ զաւակներուն, այս աներկրայելի է: Ուրեմն ինչու այսպիսի բարերար, խոհեմ, հուժկու Ընկերութիւն այս օրուայ օրս պիտի ունենար միայն 500 անդամակիցք, և ոչ 1000 կամ 1500 և կամ աւելի ես, որովհետեւ նրա տարեկան բաժանորդագինը մի չնչին փող է:

Օրերս առաջ, կուգայ ժամանակ—և այդ շատ հեռաւորապարզի չէ—երբ Ընկերութիւնս այնքան անդամներ կ'ունենալ, որը բան որ Նոր-Նախիջևանը ունի հայ բնակիչք՝ թէ արք և թէ կանայք, թէ միծատունք և թէ մուրացիկք, թէ քաղաքիս կառավարողը և թէ գատարանի յետին գոնապանը, ամենքը պատիւ և անձնական շահ կըհամարեն իրենց լուման ձգելու այս ժողովը՝ գական գանձարանը:

Նա կեանք ունի և կըհզօրանայ, ով որ յարատեւ շարժման մէջ է: Թող Ընկերութիւնս անդամակիցքը խօսին, գատեն, վիճեն, ընդունին, միրժեն, զործեն, ներքործեն, փոյթ չէ, թող սխալին, թող ընկնին, բայց թող չըվհատին, այւորուայ ընկնողը վազը ամուր ոտքի վրայ կը կանգնի: Կատարելագործութիւնը շարժման գործողութեան մէջ է և ոչ անշարժութեան և անգործութեան:

Չէ կարելի ասել որ՝ ինչ և արաւ Ընկերութիւնը—բոլորը լաւ արաւ, և գորանէն աւելի լաւ անել կարելի չէր. ոչ, ամենեին ոչ, բայց համարձակ կարելի է ասել որ՝ ինչ և արաւ, մինչե անգամ սխալը, բարի և մաքուր խղձմանքով արաւ, առանց մեղանչելու իւր խղձի դէմ, առանց գաւաճանելու իւր համոզմունքը: Եթէ կ'ուղես Նախիջևանի ժողովրդի միջին (juste milieu)

մաաւոր զարգացումնը, միջին բարոյականութիւնը, միջին առողջամասութիւնը ճանաչելու ուշը գարձներ Ընկերութեանս խորհրդականի գաւամանց և ոլոշմանց, և կըգտնես:

Նոր-Նախիջևանի Բարեգործական Ընկերութիւնը իւր կազմակերպութեամբը մի նոր ծառայութիւն ևս ցոյց տուեց հայոց ազգին, որի վրայ տակաւին մարդոց ուշը գարձած չէ, այն է՝ նա առանց վէճերու, առանց բանակուռութիւններու, առանց պոռոտախօսութեան, առանց խելք մաշելու, և միայն իւր գոյութիւնովն ու գործունէութիւնովն ջրեց մեր մէջ առած գարձած գարշնչի հին նախապահարմունքը թէ՝ «հայք ոչ միաբանին». նա իւր 25 տարուայ անգորը, գործունեայ և արդիւնաւոր կեանքով և իւր 500 անդամներովն ցոյց տուեց աշխարհին, որ հայերը կը միաբանին, եթէ միայն խմբուած լինին մի սուրբ, հանրաշահ և անխարդախ գործի շուրջը:

Իւր ուխտին և իւր կանոնագրութեանը համաձայն Նախիջևանի Բարեգործական Ընկերութիւնը, յլնթացս 25 տարուան, իւր բոլոր ոյժը լարած՝ ազգի ազգի բարի գործեր կատարեց, որքան որ ներկեցին նորա սահմանափակ միջոցները: Բայց այդքան չէ նորա երախտիքը. նա միենոյն ժամանակ իւր սեպհական ոյժն ևս աճեցուց (և կըշարունակէ ևս աճեցնելու) ապագային աւելի շատերը և մեծերը անելու համար: Այս է նորա ամենապահատի յատկութիւնը: Ընկերութիւնս տարիէ տարիէ կընզօրանայ և հզօրանալովն նորա բարեգործութեան ասպարէզը կըլայնանայ:

Ահա համառօտատապէս Ընկերութեանս գործունէութիւնը՝ չքաւոր ընտանիք խնամիկ. ազքամներուն միանուագ ողորմութիւն բաժանել (փող, ուտելիք, հալաւ), չքաւոր աշակերտներուն և աշակերտունիներուն ամեն պիտոյքը հոգալ, (ուսման վարձ հանդերձելին, վրեանք, ուսումնական առարկաներ) յառաջադէմ և ընդունակ աշակերտներուն և աշակերտունիներուն՝ կատարելազործուելու համար, միջին վարժարաններ և համալսարան զետեղել. գիտնական համազգիներուն օժանդակութիւն հասցնել. հայոց ժամերու պէտքը հոգալ, և այլն:

Այս քսանհինդ տարուայ մէջ ընտանիք ստացել են Ընկերութիւնէս իրենց բոլոր ապրուստի պիտոյքը,

700-ի չափ հայ մուրացիկ ազքամներ միջին քանակով 5-ամական մանէթ ստացել են Ընկերութեանս գանձանակէն:

Զանազան վարժարաններու մէջ Ընկերութեանս հաշուալովորել են բազմաթիւ տղայք և աղջկունք *):

*) Ցուցակը տես վերջը

ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԱՐԵՑԱՐՁԻ ՀԱՆԴԻՌԻ

Պատմութեանս սկզբանը հարեանցի յիշեցինք Ընկերութեան ամ ըստ ամէ կատարած իւր հիմնարկութեան տարեգալրձի հանդէսը։ Այտեղ կ'ուղենք մի փոքր մանրամասնաբար նկարագրել այդ, որ այժմ, կարելի է համարձակ տուել, Նոր-Նախիջևանի ժողովական տօնախմբութիւններու մէջ ամենազեղեցիկը, ամենաշուրջանակին և ամենապահանձալին է։

Տօնախմբութեան համար նշանակածէն 3—4 օր առաջ Սուրբ Խաչ վանքի թաւախիտ պարտիզի մէջ կտաւէ ահադին վրան (չատըր) կըշինուի՝ պատերը զորգերով ծածկած, ծաղիկներով զարդարած, մէջը ջահեր, զոյնզոյն լապտերներ կախած. այս գլխաւոր վրանը կըհամարուէր, ուր պիտի ժողովուէին հկեղեցականաց գտար, պատուաւոր քաղաքացիք և եկաւոր ակնածելի հիւրեր։ Բայցի գորանէն, ոչ հսկի այդ գլխաւոր վրանէն կըշինուէին այլ ևս 5—6 վրաններ, որոց համար քաղաքիս մէջ կըժողովէին թաշ ասած երկայն և լայն ահադին կտաւններ, որ ամեն ոք այդ դէմքի համար ուրախութեամբ կուտար Ընկերութեանը։ Մերձաւոր ծառերու վրայ կախուած կըլինէն կիտրոններ, որ պայծառ գեղեցկութիւն կուտար պարտիզին։

Որովհետեւ Ընկերութեան անդամնները այդ բոլոր օրը կանուխ առաւօտէն մինչև անագան գիշերը պարտիզի մէջ պիտի անցնէին այդ պատճառու տօնախմբութեան կառավարիչները այնպէս կը հոգալին, որ ամեն մի անդամ կերակրելինաց պիտոյքը այստեղ գտնէ։ Երկու հարիւր կտմ աւելի ևս բազմակիններու համար քաղաքէն վազօրօք կըբերուէր Սուրբ Խաչ 20 ոչխար, փութերով բրինձ, շատ զինի, օղի, գարեջուր, թէյ, շաքար և այլն և այլն. միով բանիւ մի ահադին բազմութիւն ժողովրդի յաղեցնելու, պատուածիրելու, նորան ամեն տեսակ յարմարութիւն տալու ամեն պիտոյքը կընախատեսնուէր։

Շատ պատուաւոր վաճառականներ յօժարակամ պատրա-

ստութիւն կըյայտնէին Ընկերութեանը այնօր իբրև սոսկական ծառայ սպասարկութեան անդամակից հիւրերուն, իսկ միւսները յատկապէս այդ սպասարկութեան համար կ'ուղարկէին իրենց խանութիւ գործակատարներուն Սեղանի սպասք ափսէներ, պնակներ, ջրաշիշներ, թանամաններ, անձեռոցիկներ, ափսոցներ, արծաթեայ մանր ու խոշոր զրպաններ, գանակներ, պատառաքազներ և հաղար տեսակ հարկաւոր անօթներ և ամաններ, ինքան, թէաման և այլն, և այլն, ժողովութեամբ սրտի մտօք իւր տուններէն կ'ուղարկէր. քաղաքէն սայլերով կըբերուէին սեղաններ, աթուններ և հստարաններ, որպէս զի այս շնչական խնջոյքէն, և ամեն տեսակ շքեղութեամբ և վայլելչութեամբ փայլէր ժողովրդի աչքին։

Առաւօտեան 7 ժամէն սկսած նախիջեանէն դէպի վանք հարիւրաւոր կառքեր կըդիմէին, իսկ չքաւոր ժողովութեամբ և ուխտաւորները նոյն ճանապարհով կ'երթային հետի։ Այդ օրը կարելի է տոել, Նախիջեանը կիսով չափ կը տեղափոխուէր դէպի իւր հաշակաւոր վանքը։ Ամենի երեսէն ուրախութիւն կըկաթէր, ամենի սիրալ լցուած կըլինէր այնպիսի ուրախութեամբ, որն անհնար է գրչով նկարագրել։

Շատ ազգային, եկեղեցական և այլ տօնիր ու հանդէսներունի միը տեղի հայ ժողովութեամբ. բայց այս տարեղարձի նման անկեղծօրէն, ի բոլոր սրաէ զուարձանալու տօն չունի նա. ուրան չեն հաւասարուիլ ոչ «Ախսայի Տէրէ»ի զբօսարանը, ոչ «Խտրէլէզը», ոչ «Վարդավառը» (Վարդեսը), ոչ մի տօնավաճառ և ոչ մի այլ եկեղեցական հանդիսակատարութիւն։ Ախսայի Տէրէի զբօսարանը այնոր համար թանգ է միը նախիջեանցիկն, որ նա ձմեռուայ ձանձրացուցիչ ձիւներէն և գարնան անտանելի ցեխներէն զզուած առաջին անգամ կանանչ և կարմիր կիրակիներն կըտեսնէ դալար արօտ և երփներանգ ծաղիկներ. խտրէլէզը այնով թանգ է նորան, որ այնոր նորա սիրական անմեղ զաւակունքը կըզուարձանան ոլէսապէս անուշեղէնք ուտելով և ձօճաններու վրայ շրջելովն եկեղեցւոյ մէջ կըլսէ նա իւր նախիջեաց աւանդած սուրբ խրատները և իւր ազգի նահատակներու փարքը։ Բայց Սուրբ-Խաչի մէջ կատարուած Բարեգործական Ընկերութեան տարեկան հանդիսի մէջ նա այդ ամենը ի միասին գումարուած կըտեսնէ հոգեկանը խառն մարմնաւորի հետ. կին, այր, աղջիկ աղայ, երիտասարդ, ծերունի, աղօթասէր և աշխարհամբ—ամենքը հաւասար կըզուարձանան, ամենքը այս վրդական տօնախմբութեան մէջ ունին տեղ, դեր և պատճառ, ամենքը այստեղ ոլէտք են, ոչ ոք աւելորդ, անդիտան չէ, ամեն

ոք համոզուած է, որ նա մէկ գեղեցիկ գործի ամենահարկաւոր
անդամն է:

Այսպէս ահա կը լինի իմաստը ժողովրդի և ոչ թէ մէկ մաս-
նաւոր անհատի կամ մասնաւոր գասակարգի հնարած տօնախմ-
բութիւնը: Եւ ժամանակը, և՛ տեղը, և՛ օրը, և՛ պարագան—բո-
լորը, բոլորը այնպէս գեղեցիկ յարմարացուցած են, որ տեղի
լաւ չէր կարող լինել, եթէ հազար խելք մաշուէր, հազար հրո-
վարտակներ յօրինուէր...

Վանքի մէջ պատարագը կը սկսուի առաւօտուայ ժամը 9-ին
և կը վերջանայ մօտաւորապէս 12-ին: Ժամերգութիւնը կը կատա-
րուի շատ շքեղ և շատ փառաւոր կերպով: Քաղաքէն կը հրաւիր-
ուին երգեցիկ աշակերտներու խումբ, որոնք բոլոր պատարագի
և այլ երգեցողութիւնը կը կատարեն կանոնաւոր կերպիւ՝ հմուտ
սարկաւագներու: Կառավարութեամբը: Յետ պատարագին կը կա-
տարուի հոգեհանգիստ այն հանգուցեալների վրայ, որոնք թողել
են աստի կեանքն՝ Ընկերութեան անդամ լինելու միջոցին, դասք
քահանայից եկեղեցւոյ մէջ տեղը կանգնած և ժողովուրդը վա-
ռած մոմեր ձեռքերը բռնած՝ Ընկերութեան սըդաւոր մատեանի
մէջ արձանագրուած մի ըստ միոջէ նոցա անուններն և ազգա-
նուններն բարձր ձայնով կը կարգացուին, և ժողովուրդը յիշելով
իւր անդամակիցներուն, քաղաքակիցներուն, ծանօթներուն և բա-
րեկամներուն՝ ջերմեանդ սրտով նոցա հոգիներուն «ողորմի»
կուտայ:

Այս սրտառուչ և հանդիսաւոր ծէսը կատարելէն յիտ՝ բոլոր
դասը եկեղեցականաց իրենց եկեղեցական զգեստ ու զարդով,
խաչերով, խաչվառներով, տեհատաճանով, բուրուառներով, կերոն-
ներով երգելով և բազմախառն ժողովուրդը ետեներէն կ'երթան
վանքի գաւիթը և անտի, սանդուղքէն վայր իշնելով՝ կը մանեն
պարտէզ, և այսպէս թափօրով կը մանեն յիշեալ միծ վրանի մէջ,
և այնտեղ գէպքին յարմար ալօթքներով և երգերով կ'օրհնեն
ջուրը, կ'օրհնեն ժողովուրդին, և, վերջապէս, կ'օրհնեն մատաղը և
պատրաստած սեղանը:

Այստեղ եկեղեցական դասը արգէն իւր պաշտօնը վերջա-
ցուցած կը համարէ և այնուհետև աշխարհականները կը սկսեն
իրենցը:

Ամենէն առաջ ի հարկէ, հիւրերուն կը բաժանուի «մատաղի
միուը»: Սա մանրամասն ստորագրութեան կարօտ չէ: Հարցենք
որ ուր և իցէ գտնուուի մէկ հայ, որ կեանքի մէջ զէթ մի անդամ
սորտ մասին գաղափար ստացած չըլինի. և մենք, անշուշտ, ոչոքի
նոր բան ծանուցած չենք լինիւ, եթէ տանք թէ մսեղէն կերտ-

կուրների մէջ ամենէն համեղը «հայի եկեղեցւոյ գրանը պատ-
րաստած մատաղն է»:

Յետ մատաղին ահագին պնակներով առաջ կը բերուի «փոր-
լից» ասած գառի խերովածը:

Նոյն սեղանի վրայ շաբուած են ամեն տեսակ խորտիկներ՝
ձկնեղէն, պանրեղէն, ձկնկիթ, նարինջ և շատ ուրիշ պաշարներ:
Գինի, գարեջուր, օղի ժողովրդի բազմութեան համեմատ քանա-
կով պատրաստ են: Զափաւոր կիր, խում, ճառեր, կինաց թա-
սեր, ողորմաթասեր և այն, և այն: Կ'առաջարկուին ողորմած
կայսեր և նորա Ընտանեաց, վեհափառ Կաթողիկոսի, տեղույս
տուաջնորդի, Ընկերութեան անդամոց և Եախիջևան քաղաքի բա-
րօրութեան կենաց թասեր: Ի հարկէ, չին մոռացուիլ նաև ա-
նունը ննջեցեալ անդամակիցներուն, որոնք իրենց կենդանու-
թեան ժամանակ որքան և իցէ նպաստամատոյց եղել են Ընկե-
րութեանս զարգացման:

Սեղանի վրայ ընկերակցիք կը մնան մօտ 3—4 ժոմ. յետ
այսօրիկ խումբ-խումբ կը բաժաննուին պարտիզի ամեն կողմն և
այնտեղ կը շարունակին իրենց զուարձութիւնը մինչև գիշերուայ
ուշը:

Առաջուայ ժամանակները այս հանդիսի համար ամեն ան-
դամէ կ'առնուէր մի-մի սուպլի. բայց այժմ այդ սուրքը վերջա-
ցած է: Անդամները նկատել են, որ շատ անդամ մարդիկ մի մա-
նէթ տալու խնճոյքի համար շատ կը դժուարանան. իսկ խնջոյքի
միջոցին, երբ որ հանդէսը նոցա վրայ զեղեցիկ տպաւութիւն
կ'անէ խնայած չեն 100 սուպլի. տեղնիտեղը վճարել են այդ գու-
մարը և գարձել են մշանջենաւոր անդամ Ընկերութեան:

Այժմուայ ժամանակ մի այլ փոփոխութիւն ևս կայ. այժմ,
առաջուայ տարիներու պէս, կտաւէ վրան չեն շինիլ, այլ կը վար-
ձեն պարտիզի մէջ գտնուած վանքապատկան ահագին հոյակապ
հովանոցը, և այնտեղ կը կատարեն թէ եկեղեցական ծէսերը և թէ
աշխարհային զուարձութիւնները:

Երկրորդ փոփոխութիւն ևս կայ: Առաջուայ ժամանակները
այս հանդէսը և տօնախմբութիւնը կը կատարութեան
հաստատութեան տարեգարձի օրը՝ բայց որովհետեւ այդ օրը ուս-
տուարնակ հայերը իրեն առուտուի պատճառով ներկայ գտնուել
չէին կարող, ուստի այստեղ ալ Ընկերութեանս կառավարիչները
խնճեմութիւն բանեցուցին, որով Ընկերութիւնը ոչ միայն վնաս
կրեց, այլ ընդհակառակն մեծապէս շահուեցաւ: Այժմ հանդէսը,
ինչպէս վերը յիշել ենք, կը կատարեն Հոգեգալստեան տօնի օրը
երբ ամեն հայ ամեն տեղ ազատ է իւր ամեն անձնական գոր-

ծերէն և միծագոյն մասը նախիջևանցոց, յետ ձանձրալի ձմեռուայ օրերուն, կերթայ իւր սիրտկան զրօսատեղին—Սուրբ-Խաչի պալտէզը՝ դալար արօտ տեսնելու և թարմ ու զով օդ ծծելու:

Պատմութեանս սկզբանը մինք տեսանք, որ Ընկերութեանս նախկին անդամակիցը էին զըմթէ աննշան, չբաւոր պատանիւներ, բայց յետոյ կամաց-կամաց անդամակցութեան մասնակցեցան չափահաս և ալեղարդ քաղաքացիք և մեծատռներ, իսկ այժմ մինչեւ անդամ կանայք ուրախութեամբ կըմտանացին այս ազգաւոհ ընկերութեան:

1885 - 1910

* * *

Մտադրութիւն ունենալով տալ հասարակութեանը Նոր-
Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութեան հիմ-
նարկութեան և յիսնամեայ գործունէութեան պատմու-
թիւնը և ունենալով ձեռքի տակ Ռ. Պատկանեանի գեղե-
ցիկ զբած պատմութիւնը Ընկերութեան 25-ամեակի առ-
թիւ, Ընկերութեան Խորհրդարանը որոշեց օգտուելով հան-
գամանքից՝ տալ հայ հասարակութեան նրա սիրած Գա-
մառ-Քաթիպայի այդ անտիպ երկը:

Այդ պատմութիւնից ընթերցողն արգէն իմացաւ, թէ
ինչպէս է հիմնուել, գործել, ծաղկել և ինչ համակրանք
է վայելել Ընկերութիւնը իւր գործունէութեան առաջն
քամանինդ տարուայ ընթացքում: Իսկապէս դժուար է զըտ-
նել այժմ մի այնպիսի հաստատութիւն, որն այնքան սի-
րելի լինէր հասարակութեան, որքան էր նոր-նախիջևան-
ցուն այն ժամանակուայ Նախիջևանի և շրջակայքի միակ
հայ հաստատութիւնը՝ Բարեգործական Ընկերութիւնը: Մեզ
մնում է այժմ մի քանի խօսք ասել Ընկերութեան եր-
կրորդ 25 տարուայ գործունէութեան մասին:

Ինչպէս որ յիշում է իւր պատմութեան մէջ Պատկա-
նեանը, նոյն ուղղութեամբ էլ շարունակել է Ընկերու-
թիւնը գործել մինչև 90-ական թուականները: Նա պահել
է սաներ քաղաքիս և օտար քաղաքների միջնակարգ և բար-
ձրագոյն դպրանոցների մէջ, չքաւորներին ամսական նպա-
ստներ է տուել ապրուստի համար, քարածուխ է առել
վագոններով և բաժանել նրանց, որբ մնացած ընտանիք-

ներն առել է իւր հովանաւորութեան ու խնամքի տակ և
այն և այն:

Բայց 90-ական թուականներին Ընկերութիւնը փոփո-
խութիւն է մտցնում իւր գործունէութեան մէջ. այդ ժա-
մանակները հիմնում է Նախիջևանի Աղբատաց Եկեղեցա-
Հոգաբարձութիւնը, որին և անցնում է թէ աղբատներին
խնամելու և թէ բարձրագոյն դպրոցների մէջ սաներ պա-
հելու գործը:

Ընկերութիւնն ազատուելով այդ՝ իւր միջոցների հա-
մար ծանր հոգսերից, մօտաւոր նպատակ է դնում իրան
քաղաքիս չքաւոր ընտանիքի զաւակներին տալ տարրական և
միջնակարգ կրթութիւն՝ շատացնելով սաների թիւը տեղիս
դպրոցների մէջ. և կամաց-կամաց օտար քաղաքներում եղած
սաներին իրանց ուսումն աւարտելու հարաւորութիւն տա-
լով և նրանց տեղ նորերը չընդունելով՝ նա համառմ է իւր
նպատակին և այժմ քաղաքիս զանազան դպրոցների մէջ
ունի 114 սան, որոնց վրայ ծախսում է համարեա իւր բո-
լոր միջոցները. Գրքոյկիս վերջում զետեղուած ցուցակից
արդէն պարզ կերևայ, թէ ինչ են ստացել բոլոր սաները
տարեկան և իւրաքանչիւրը ջոկ-ջոկ, բայց այնտեղ չէ յի-
շած, որ ամբողջ ժամանակ հատուցւում էր նաև զգեստ
ստացողներից շատերի ուսման վարձը:

Սաներ պահելուց զատ եղել է փորձ և դպրոց բա-
նալու, և Ընկերութիւնս՝ բացել է «Սանդիստեան» դպրոցը,
որ սակայն կարճատե գոյութիւնից յետոյ փակուեց:

Տարիներ շարունակ թեմական դպրանոցի Հոգաբար-
ձութիւնը միջոցներ չունենալու պատճառով՝ չէ կարո-
ղացել դպրանոցի շէնքն ընդարձակել, որ սակայն ան-
հրաժեշտ էր և ահա Ընկերութիւնը տալիս է 10,000 ր. և
գործը յաջողւում: Դպրանոցը նիւթական միջոցների պա-
կասութիւն է զգում. Ընկերութիւնը որոշում է մի ամ-
բողջ բաժնի պահպանութեան պէտք միջոցները տալ ամեն
տարի և սաներից՝ 25 երթևեկի և 1 գիշերօթիկի ուսման
վարձ վճարում (տարեկան մօտ 2000 ր.):

Նիւթական միջոցների նեղութեան ժամանակ՝ Ընկե-

րութիւնը չէ մոռացել իբրև հայ հաստատութիւն՝ հասնել
օգնութեան, ուր որ կարիք է զգացուել. այսպէս՝ նա իւր
ժամանակին հասել է Գէորգեան ճեմարանին, քաղաքիս
Հոկիմիմեան և Արճեստաւորաց դպրոցներին, վերջինիս
այժմս էլ տալիս է տարեկան 600 ըուբլի:

Լինելով տեղական հաստատութիւն, Ընկերութիւնը
երբէք առաջնորդուած չէ եղել նեղ հայեացըներով, նա
երբէք խարութիւն դրած չէ տեղացիների և ոչ-տեղացի-
ների մէջ, իբրև հայ հաստատութիւն նա կովկասեան ա-
ղեաների ժամանակ օգնել է իւր միջոցներից նպաստ ու-
ղարկելով այնտեղ և այնտեղից փախչողներին՝ տեղումս:
Տաճկահայ սովեալներին նոյնպէս իւր լուման է ուղար-
կել: Սաներ է ընդունել անխտիր ամեն հայի զաւակ:

Նա աշխատել է միշտ լինել հայկական հաստատու-
թիւն և այդ մասամբ նրան յաջողել է:

Դեռ 70-ական թուականներին նա նպաստել է հրա-
տարակել՝ Պ. Հալլածեանին՝ իր երգարանը, Գ. եպ. Այ-
վազովսկուն՝ իր «Եօթն խօսք առ տղայս» և «Տնային
մարմնամարզութիւն» թարգմանութիւնները, Մինաս քահ.
Փախալեանին իւր «Հայ. լեզ. գեղագրութիւնը», Ղ. Աղայեա-
նի յոբելեանի առթիւ՝ նրա երկերն է գնել և ձրի տարա-
ծել Նախիջևանի աշակերտութեան մէջ, Խ. Ստեփանէի
Խորենացու թարգմանութիւնն է տարածել նոյնպէս, իսկ
1903—7 թուերին հաւաքեց և ի լոյս ընծայեց նախիջևան-
ցու պարձանք՝ Ռ. Պատկանեանի և Միք. Նալբանդեանի
երկերը. (առաջինի 111 հատորը և երկրորդի բոլոր եր-
կերը երկու հատորի մէջ), որ Ընկերութեանը մօտ 4000 ր.
արժեց: Ընկերութիւնը միշտ աշխատել է լինել բերան
տեղական հայութեան, կենդանի կապ ընդհանուր հայու-
և մեր անջատուած փոքրիկ գաղութի մէջ. ամեն մի հայ-
կական տօն, գէպք—արձագանք է գտել Ընկերութեան
կողմից. նա մասնակցել է գրեթէ մեր բոլոր յայտնի գրողների,
գործիչների յոբելեաններին, աշխատում է նրանց անուն-
ները ժողովրդականացնել նրանց երկերը տարածելով
և նրանց անուան սաներ պահելով թեմական դպրանոցում:

Ս Ա Ն Ե Ր Ի Ց Ո Ւ Յ Ա Կ Լ

1860—1910

Ամբողջ տարիներ շարունակ նա եղել է տեղիս հայու։
թեան միակ սիրելի հաստատութիւնը, նրա տարեդարձի
օրը՝ Նախիջևանի շրջակայ հայ գիւղացոց տօնն է եղել։
Նա տուել է Նախիջևանին և շրջակայքի հայութեան շատ
պիտանի անդամներ, և այսօր, ահա, նա իրաւունք ունի
ասել Նախիջևանցուն—մի մոռանար ինձ, ես քեզ տուի
պիտանի անդամակիցներ, լաւ քաղաքացիներ և հայեր։

Յ. Մ.

№ №	Սանի անուն և ազգանունը	Թ ը տ ե ղ է ս ո վ ո ր ե լ	Ո ր բ ա ն ժ ա մ ա ն ա կ ո վ	Ի ՞ն չ է ս տ ա ց ե լ
1	Ասլանեան Եղիս	Թեմ. դպ.	1879—83	Զ գ ե ս տ
2	» Աւետիք	» »	1887—94	»
3	Առեխեան Խաչատուր	» »	1885—84	»
4	Աղամալեան Աւետիք	» »	1889—96	»
5	Այդինեան Գրիգոր	» »	1900—903	»
6	Ազնիւեան Յովակիմ	» »	1900—902	» և 150 լ.
7	Այդինեան Գէորգ	» »	1900—901	»
8	» Սարգիս	» »	1902—10	» և 426 լ.
9	» Թէոդոս	» »	1908—կայ	»
10	» Վարդան	Մոսկ. հմլ.	901, 06—7	100 լ.
11	Ասպէկեան Յովհաննէս	դաւ. դպ.	1867—71	Զ գ ե ս տ
12	Արարեան Վահան	Թեմ. դպ.	1899—901	»
13	Աղիզբէգեան Գալուստ	» »	1899—02	»
14	» Խաչատուր	» »	1898—02	»
15	» Վարդուհի	Գիմնազ.	1900—02	100 լ.
16	Աֆթանդիլեան Դանիէլ	Թեմ. դպ.	1901—08	զ զ. և 420 լ.
17	» Գրիգոր	Արհ. դպ.	1902—կայ	480 լ.
18	» Գէորգ	» »	1903—10	420 լ.
19	Այվազեան Գէորգ	Թեմ. դպ.	1899—02	Զ գ ե ս տ
20	» Լիոն	» »	1898—02	»
21	» Յովսէփ	» »	1909—10	»
22	» Մերովէ	» »	1910—կայ	»
23	Աթթարեան Յովհաննէս	Ա. Թուր. դ.	1907—կայ	»
24	» Ռուբէն	» »	1908—կայ	»
25	Աթոյեան Մարտիրոս	Մոսկ. հմլ.	1906—07	150 լ.
26	Այթեան Յովհաննէս	Արհ. դպ.	1906—08	98 լ.
27	Անտօնեան Համբարձում	» »	1906—09	150 լ.
28	» Գէորգ	Ա. Հմբ. դպ.	1906—10	Զ գ ե ս տ
29	Անոսեան Յովակիմ	Արհ. դպ.	1906—08	70 լ.
30	Աղաօղուեան Խաչատուր	» »	1906—կայ	242 լ.
31	Աղապատեան Դշուուհի	Մադ. դպ.	1907—09	Զ գ ե ս տ
32	Արաբաջեան Մագդաղինէ	Հովհ. դպ.	1897—01	»
33	Այուեան Բաղդասար	Թեմ. դպ.	1901—06	»
34	» Յովհաննէս	» »	1902—06	»
35	Ախայեան Թորոս	» »	1902—04	5 լ. ամս.
36	Անոփեան Գրիգոր	Ժրն. հմլ.	1899—02	400 լ.
37	Անանեան Գարբիէլ	Թեմ. դպ.	1910—կայ	Զ գ ե ս տ
38	Աւետեան Մարտիրոս	» »	1898—03	»

39	Անթառամեան Սննա	Պրոդիմ.	1867—72	Զգեստ		83	Բաբիկեան Գալուստ	Թեմ. դպ.	899—902	Զգեստ
40	Աւագեան Գայիանէ	» »	1872—76	»		84	Բեղելեան Յակովը	» »	898—905	"
41	Ասպէկեան Շողակաթ	» »	1872—76	»		85	Բեղելեան Գէորգ	Թեմ. դպ.	902—906	"
42	Առաքեան Եղիսաբէթ	» »	1873—76	»		86	» Միքայէլ	» »	901—906	"
43	Աղամանեան	դիմուգ.	1874—76	»		87	» Սիմէօն	» »	898—900	» և 145ր.
44	Ասմայեան Բրաբիոն	» »	900—906	»		88	» Կատարինէ	ս. Հոփի.	900—902	"
45	Առեխեան Կատարինէ	» »	898—902	»		89	Բողդանեան Յակովը	Լազ. ձեմ.	1878—86	3090 ր.
46	Առաքեան Եղիսաբէթ	Հոփ. դպ.	1883—88	»		90	Բալթաճեան Մկրտիչ	Թեմ. դպ.	901—903	Զգեստ
47	Այուեան Մագթաղինէ	» »	1887—89	»		91	Բիլիկեան Դաւիթ	» »	» —902	"
48	Աւագեան Մարգիս	Թեմ. դպ.	1905—08	»		92	Բայանգուրեան Աղամ	» »	901—902	"
49	Աղեմերեան Գաբրիէլ	» »	1905-կայ	245 ր.		93	» Գաբրիէլ	ս. Համբ.	906—908	"
50	Այուեան Յարութիւն	» »	1904—10	Զգեստ		94	Բաղրաւուխեան Մարգիս	Արհ. դպ.	904—909	"
51	Աղաբաբեան Արամ	» »	1905—07	»		95	Բարաջանեան Եղիսաբէթ	Գոգ. դիմ.	1908-կայ	"
52	Աւագեան Վարդան	» »	1903—06	»		96	Բողաճեան Յարութիւն	Թեմ. դպ.	1903—06	"
53	Ամիրխանեան Յովհաննէս	ս. Թոր.	1906—07	»		97	Գասպարեան Միքայէլ	Ա. Խաչ.	1889—92	200 ր.
54	Ասմայեան Վարդուհի	ս. Սնդ.	1910-կայ	»		98	Գալստեան Դշունի	ս. Հոփ.	1907—08	27 ր.
55	Աստուածատրեան Շուշանիկ	ս. Հոփի.	1908-կայ	»		99	Գալուկեան Գասպար	Թեմ. դպ.	1903—06	Զգեստ
56	Այուեան Ռուբէն	Թեմ. դպ.	1910-կայ	»		100	Գիւրջօղուեան Նիկողայոս	» »	1907—09	700 ր.
57	» Նիկողայոս	ս. Թոր.	1910-կայ	»		101	» Յովհաննէս	» »	1910-կայ	Զգեստ
58	Արաբաջեան Սննա	» »	» »	»		102	» Նիկողայոս	վետ. ձեմ.	1909-կայ	300 ր. տ.
59	Այփագեան Շուշանիկ	» »	» »	»		103	Գասպարեան Ղազարս	Թեմ. դպ.	1876—78	Զգեստ
60	Արաբաջեան Լուսեղէն	Ա. Համբ.	» »	»		104	Գրիգորեան Հայկ	» »	1902—04	60 ր.
61	Այուեան Գալուստ	Թեմ. դպ.	905—907	»		105	Գառնակերեան Գէորգ	Պետ. արհ.	1889—95	1740 ր.
62	Ասմայեան Յովսէփ	» »	902—903	»		106	Գղիրեան Գուրգէն	ս. Համբ.	1906—09	Զգեստ
63	» Բրաբիոն	Հոփի.	1892—96	»		107	Գղղղեան Մկրտիչ	Թեմ. դպ.	903—909	"
64	Բարիեան Մարգիս	Ա. Թոր.	1910-կայ	»		108	Գասպարեան Կիրակոս	» »	1910-կայ	"
65	» Ստեփան	Արհ. դպ.	905—908	210 ր.		109	Գենձեան Յակովը	» »	1889—92	"
66	Բաբաջանեան Աղէքսանդր	Թեմ. դպ.	1908-կայ	Զգեստ		110	Գերիջանեան Աւագ	Մոսկ. հմլ.	1888—89	350 ր.
67	Բաղդասարեան Գէորգ	» »	1910	»		111	Գօնիկեան Լուսիկ	Գիմնագ.	898—901	Զգեստ
68	Բաբիեան Մարիամ	ս. Հոփի.	1910	»		112	Դալաբայեան Հայկ	Թեմ. դպ.	1908-կայ	Գիշերօթ.
69	Բիլիկեան Նիկողայոս	ս. Թոր.	1910	»		113	Դողովեան Ղուկաս	» »	900—902	Զգեստ
70	Բաբիեան Աստուածատուր	ս. Համբ.	1907	»		114	» Գրիգոր	» »	1904—05	"
71	Բալիեան Յակովը	» »	» »	»		115	Դաբախեան Գրիգոր	» »	1885—88	"
72	Բեռիեան Սերովէ	ս. Թոր.	906—909	»		116	» Գէորգ	» »	1889—98	"
73	Բեշտաւեան Յակովը	Թեմ. դպ.	905—908	»		117	» Մտեփան	» »	1899—02	"
74	» Ղազարս	» »	893—902	»		118	» Մարիամ	Հոփիսիմ.	1887—90	"
75	Բերբերեան Յովհաննէս	» »	1879—85	»		119	» Գոհարինէ	Պըոգիմն.	1889—94	"
76	Բողդանեան Յակովը	» »	1876—78	»		120	Դաշտեմուրեան Գարեգին	Թեմ. դպ.	900—902	140 ր.
77	» Սիմէօն	» »	1885—89	»		121	Դուրբախեան Նիկողայոս	գեղ. ձեմ.	1874—77	750 ր.
78	» Մտեփան	» »	1889—94	»		122	Դարբինեան Միհրան	Ա. Թոր.	906—909	Զգեստ
79	Բերբերեան Մուրադ	» »	1887—94	»		123	Ետիքեսելեան Խաչիկ	Թեմ. դպ.	901—907	"
80	» Սննանիս	» »	896—901	»		124	Երևանցեան Նիկողայոս	» »	897—903	"
81	» Տիգրան	» »	898—902	»		125	Եսայեան Գաբրիէլ	» »	1885—86	"
82	» Մարիամ	Պրոդիմ.	1892—94	»		126	» »	Լազ. ձեմ.	1886—94	Ճրիավ.

127	Եղիազարեան Գէորգ	Թեմ. դպ.	905—906	Զգեստ		171	Թեղիբեան Շողակաթ	Պրոգիմ.	1887—89	Զգեստ
128	Եղիայեան Մկրտիչ	» »	1891—95	»		172	Թիքիճեան Թորոս	Թեմ. դպ.	901—905	,
129	Երեցփոխեան Վարդան	» »	900—907	»		173	Թուքոտեան Մանուկ	» »	902—904	,
130	»	Պրոգիմ.	1873—76	»		174	Թիւնիեան Աստուածատուր	» »	1910-կայ	,
131	Եաղճեան Լուսեղէն	Թեմ. դպ.	1901—03	»		175	Թիքիճեան Վառվառէ	Հոփիսիմ.	1910-կայ	,
132	Ելիսրճեան Ներսէս	Լազ. ճեմ.	1870—72	657 լ.		176	Թաշչեան Աստուածատուր	ս. Համբ.	906—908	,
133	Զաքարեան Մատթէոս	Թեմ. դպ.	903—909	233 լ.		177	Թաշչեան Աստուածատուր	Թեմական	1903—06	,
134	» Սմբատ	» »	904—907	Զգեստ		178	» Մանուկ	Արհեստ.	1890—92	,
135	» Յովակիմ	» »	903—904	»		179	Թումասեան Յովհաննէս	» »	1889—92	,
136	Զօրիեան Յովհաննէս	ս. Համբ.	903—908	»		180	» Ալեքսան	» »	904—908	278 լ.
137	» Գրիգոր	թեմ. դպ.	901—903	»		181	Ժամկոչեան Մագթաղինէ	Պրոգիմ.	1872—76	Զգեստ
138	» Յարութիւն	» »	903—909	»		182	» Մկրտիչ	Թեմական	1901-կայ	,
139	Զուբեան Դաւիթ	գիմնադ.	900—903	260 լ.		183	Խոկենդերեան Խաչատուր	» »	1902—08	,
140	Զուռնաճեան Դանիէլ	Թեմ. դպ.	1903-կայ	455 լ.		184	» Մելքոն	» »	1901—05	,
141	» Յովակիմ	» »	907—908	72 լ.		185	Իգնաֆոսեան Խաչատուր	» »	1902—05	,
142	» Մարիամ	Հոփիսիմ.	907—909	184 լ.		186	Խոկիտարեան Մարտիրոս	Պետ. Ար.	1887—88	435 լ.
143	» Մանուշակ	Գոգ. գմն.	1910-կայ	80 լ.		187	» Կատարինէ	ս. Հոփիս.	1900—02	Զգեստ
144	Զաքարեան Գրիգոր	Թեմ. դպ.	907—908	Զգեստ		188	Իզմայլցեան Մելքոն	Թեմական	1887—89	,
145	Էքմէքչեան Փեփրոնէ	Պրոգիմ.	1889—94	»		189	» Մարդիս	» »	1887—91	,
146	» Աննա	գիմնադ.	904—909	360 լ.		190	» Գէորգ	» »	1904—06	,
147	» Գրիգոր	թեմ. դպ.	903—906	Զգեստ		191	» Բաբեին	Պրոգիմ.	1880—84	,
148	Էսքինճեան Լուսեղէն	» »	899—902	»		192	» Մարիամ	» »	1885—87	,
149	Թաշչեան Խոկուհի	Հոփ. դպ.	1887—89	»		193	Խոկենդերեան Կարապետ	Թեմական	1903—09	,
150	» Մանուկ	Լազ. ճեմ.	892—900	3600 լ.		194	Խորայէլեան Խաչատուր	» »	1910-կայ	,
151	» Լևոն	թեմ. դպ.	1887—94	Զգեստ		195	» Սուքիս	» »	1910-կայ	,
152	» Ստեփան	» »	1905-կայ	»		196	Լոդոչնիքեան Յովակիմ	» »	1905-կայ	293 լ.
153	» Աստուածատուր	» »	1887—94	»		197	» Գաբրիէլ	Համբ.	1906—09	Զգեստ
154	» Սբրահմամ	» »	899—901	»		198	Լիւլճեան Աստուածատուր	Թեմական	1892—02	,
155	» Մկրտիչ	ս. Համբ.	906—909	»		199	» »	» »	1909-կայ	,
156	Թորոսեան Կոստանդին	Թեմական	1889—95	»		200	Խասապեան Խաչատուր	» »	1902—06	,
157	Թիքիճեան Մարտիրոս	» »	1887—95	»		201	Խաչատրեան Մարգար	» »	1905—06	,
158	» Յարութիւն	» »	898—901	»		202	Խոզակերեան Գրիգոր	» »	1903—06	,
159	Թեփեկէնճեան Արտաշէս	» »	900—903	»		203	Խամբուրեան Յովակիմ	Մոսկ. հմլ.	1884—86	626 լ. *
160	Թըլմաճեան Վառվառէ	Հոփիսիմ.	1883—92	»		204	Խալիպեան Վարդան	Թեմական	1902—06	Զգեստ
161	» Հոփիսիմէ	պրոգիմ.	1892—95	»		205	Խույժմճեան	Պրոգիմ.	1874—76	,
162	» Մարտիրոս	թեմ. դպ.	1910-կայ	»		206	Խըրըմլեան Մարիանէ	» »	1872—78	,
163	» Շուշան	պրոգիմ.	1890—93	»		207	» »	Գիմնադ.	1880—83	262 լ. 50
164	Թիքիճեան Պօղոս	գաւ. դպ.	1867—72	»		208	» Պետրոս	Թեմական	1892—97	Զգեստ
165	Թովմասեան Սարգիս	թեմ. դպ.	897—901	»		209	Խազիկեան Եղիշ	ս. Համբ.	1906—07	,
